5014

Հ. Ֆրանֆյան

Քրիստափոր Միքայելեան

Նրա կյանքը և աշխատանքները

9(47.925)Ֆ
Ս-788

Բաքու 1917 թ.

ՀՀ ՀԻՄՆԱՐԱՆ
Ֆ-95

Ե. ՓՐԱՆԳԵԱՆ

ՔՐԻՍՏՈՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՆՐԱ ԿԵՍՆՔԸ ԵՒ ԸՆԹԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ.

ԿԱԴՈՒ
Տպարան «ԱՐԱՄԱԶԴ»
1917

5 OCT 2011

9(47.925)Ф
Ս-178.Ф

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

ՔՐԻՍՏՈՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՆՐԱ ԿԵՄՆՔԸ ԵՒ ԸՆԹԱՐՀԱՑԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ.

5014
5014

ԱԼԳՈՒ
Տպարան «ԱՐԱՄԱԶԴ»
1917

16.09.2013

35902 +

(2532-2002)

Ք. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

I.

Մի տասնամեակ առաջ*), մարտի 4-ին ընկաւ հայ ժողովրդի լաւագոյն զաւակներից մէկը, տաճկահայ դատի մեծ ռահվիրան. ընկաւ օտար երկնքի տակ և ազնիւ հերոսի մահով։

Մի տասնամեակը շատ փոքր ժամանակամիջոց է, անշուշտ, որ նման հոգիները, ինչպէս Քրիստափորն է, մոռացութեան գիրկն ընկնեն։ Այս ամբողջ շրջանում նա միշտ էլ եղել է մեր մէջ, մեր շարքերում։ Ամեն ծանր բոպէին խորհրդակցել ենք նրա հետ, ամեն ժամանակ նա հանդիսացել է ոգևորութեան անսպառ աղբիւր, Մեծ ճանապարհի վրայ լուսատու փարոս, կեանքի և գործունէութեան մեծ առաջնորդ։ Կան հոգիներ, որ չեն դադարում գերեզմանից ևս տոն տալ կեանքին, առաջնորդել սերունդներին։ Իսկ այժմ, այս ծանր և պատմական օրերին էլ աւելի զգալի է նրա ներկայութիւնը, նրա շունչը։

Այնքան հարուստ և գեղեցիկ է այդ կեանքը, այնպիսի բարոյական մեծութիւն է նա, որ տարիների փոշին անկարող է ծածկել այն։ Ազնիւը և գեղեցիկը միշտ էլ իր փայլն է արձակում։

Պէտք է միշտ թերթել այդ անման կեանքի պատմութիւնը. այնտեղ կան շատ ուսանելի էջեր։

---

*) Սա մի դասախօսութիւն է, կարդացած Ք. Միքայէլեան մահուան տասնամեակի առիթով, 1916 թ-ին։ Ժամանակին անկարող եղանք հրատարակել, իսկ այժմ լոյս ենք ընծայում քիչ փոփոխութիւններով։

II. *).

Քրիստափոր Միքայէլեանը ծնուել է 1859 թուին, մարտի 11-ին, պատմական Գողթան գաւառի մի գեղեցիկ անկիւնում, Վերին Ագուլիս գիւղում, որ մի կողմից տարածւում է դէպի Արաքսի սիրուն ափը, իսկ երեք կողմից բարձրանում են լեռները։ Վերին Ագուլիսը հասարակ գիւղերից չէ. նա համարւում է Կովկասի նշանաւոր գիւղերից մէկը։ Իսկ եղել են շրջաններ, երբ այդ գիւղը ներկայանում էր որպէս մտաւոր կենտրոն, մտաւոր և հասարական կեանքի վերածնութեան մի գործօն, մի որրան։

Քրիստափորի հայրը, Մկրտիչը, Վերին Ագուլիսի անւանի մարդկանցից մէկն էր և մեծ ընտանիքի տէր։ Նա ունէր եօթ զաւակ—չորս աղջիկ և երեք տղայ. վեցերորդը մեր Քրիստափորն էր։ Մկրտիչ Միքայէլեանն ունեւոր մարդ էր։ Ինչպէս ագուլիսեցիներից շատերը, նոյնպէս և նա՝ պարապում էր վաճառականութեամբ։ Բայց նա միւս վաճառականներից տարբերւում էր իր բարձր խելքով, իր խելացի քաղաքականութեամբ, իր կենցաղով։ Նա Վերին Ագուլիսում և շրջակայքում արդարամիտ մարդու համբաւ ունէր, մեծ յարգ և հեղինակութիւն էր վայելում։ Երբ նա գիւղումն էր գտնւում, միշտ էլ համարւում էր պատուաւոր հաշտարար դատաւոր։ Նա յաճախ բացակայում էր գիւղից և մեծ մասամբ ապրում էր Մոսկւայում։ Այնպէս որ նա աշխարհ տեսած մարդ էր, կապ և յարաբերութիւն ունէր հեռաւոր վայրերի հետ։

Քրիստափորը դեռ մանուկ էր, միայն տասներեք տարեկան, երբ միանգամայն որբացաւ։ Նա ընդամենը եօթ տարեկան էր, երբ կորցրեց իր մօրը, որ մի բարի և առաքինի, քնքոյշ և ազնիւ, մեղմ և կիրթ կին էր։ Իսկ նրա հայրը

*) Հրատարակչին շնորհակալութիւն եմ յայտնում իմ այն բոլոր ընկերներին և ծանօթներին, որոնք այս կամ այն փաստական տեղեկութիւնն են հաղորդել Քր. Միքայէլեանի կեանքի և գործունէութեան որոշ շրջանի մասին։

մեռաւ վեց տարի յետոյ, երբ նա տասներեք տարեկան էր։ Մինչև եօթ տարեկան հասակը, փոքրիկ Քրիստափորը գտնւում էր մօր անմիջական հսկողութեան և խնամքի տակ։ Մօր մահից յետոյ նրա դաստիարակութեան և կրթութեան մասին հոգում էր հայրը։

Քրիստափորն իր ամենասկզբնական կրթութիւնը ստացաւ տեղական ս. Շմաւոն եկեղեցու քահանայի որդու, տիրացու Կարապետ Արգարեանի մօտ։ Առհասարակ նա ունենում էր մօտ քառասուն աշակերտ, նստած չորս նստարանի վրայ. ամեն մի նստարանը համարւում էր մի դասարան։

Այս խալիֆայական վարժարանում Քրիստափորը սովորեց միայն մէկ և կէս տարի, որից յետոյ մտաւ ս. Թովմաս Առաքելոյ վանքի, այսինքն ծխական երկդասեան դպրոցը։ Այն ժամանակ, ինչպէս և յետոյ, այս կրթական հիմնարկութիւնը բացառիկ և փայլուն տեղ էր գրաւում մեր ծխական դպրոցների շարքում։ Այնտեղ դասաւանդել են մի շարք յայտնի ոյժեր, ինչպէս Պերճ Պոշեան, Ռուբէն Զալալեան, Սամուէլ Գիւլզատեան, Աբգար Գիւլումեան, որ յետոյ քահանայ է օծւում նոյն տեղում, Ներսէս Սիմէօնեան, Գէորգ Բարխուդարեան, Մեսրոպ Փափազեան, Նիկողայոս Տէր-Ղևոնդեան, Խ. Մալումեան և այլն։ Դպրոցն ունէր երեք նախապատրաստական և երեք դասարան, ուրեմն, վեց տարուայ դասընթաց. միանգամայն համապատասխանում էր եւրոպական տիպի ժողովրդական դպրոցին։ Դասաւանդւում էր նոյնպէս ֆրանսերէն։

Քրիստափորը խաղաղ աշակերտ էր, համեստ և բարի, տրխրամած և մտազբաղ։ Նա սիրում էր միայնութիւն և վարում ինքնամփոփ կեանք։ Նրա վրայ երբեմն այնպիսի թախծութիւն էր գալիս, կարծես ամբողջ աշխարհի վիշտը նրան էր բաժին ընկել։ Դեռ փոքր հասակից ցայտուն կերպով երևան են գալիս նրա խառնուածքին յատուկ գծերը։ Քրիստափորը մի հիւանդոտ և վոհիտ, բայց նեարդոտ մանուկ էր։ Նա ունէր տենդ, փայծաղի հիւանդութիւն։ Բայց չնայած այդ բոլորին, Քրիստափորը դպրոցի լաւագոյն և ամենայառաջադէմ աշակերտներից էր։ Նա աչքի էր ընկնում յատկապէս պատմու-

թեան և աշխարհագրութեան մէջ։ Մինչև վերջնական ապաքինումը, Քրիստափորը երկար ժամանակ տառապում էր այդ մաշող հիւանդութեան ճանկերում։ Ապաքինման գործում շատ մեծ դեր է խաղացել նրա խորթ մայրը։ Քրիստափորը իր առողջութիւնն ամբողջապէս վերագրում էր մօրը և անկեղծ երախտագիտութեամբ յիշում նրա անունը։ Պատմում են, թէ ինչպիսի հոգատարութեամբ և քնքշութեամբ հետևում էր նա Քրիստափորի առողջութեանը, ինչպիսի բնական միջոցներով շփել, մաշել է նրա փայծաղը և բոլորովին առողջացրել։

Բայց հօր մահից յետոյ, շուտով նա կորցրեց է նոյնպէս խորթ մօրը։ Այժմ Քրիստափորը կատարեալ որբ էր։ Մնացել էր միայն նրա մի քոյրը. միւս քոյրերն արդէն ամուսնացել էին, իսկ եղբայրները՝ մեռել։ Երկու որբերը, քոյր և եղբայր, յանձնւում են նրանց մեծ հօրեղբօր, Յովհաննէս Միքայէլեանի խնամքին։ Հօրեղբօր մօտ Քրիստափորը թէ տան տղայ էր և թէ միաժամանակ սպասաւոր։ Առանց որևէ տարբերութեան նա կատարում էր տան գործերը՝ թթենու տերևներ բերում շերամի համար, անասունների համար խոտ կրում և այլն։ Այդ բոլորի հետ միաժամանակ նա հետևում իր դասերին, փայլուն առաջադիմութեամբ փոխում դասարանները։

Այդ շրջանում, երբ Քրիստափորը հազիւ 13-14 տարեկան էր, նրա քրոջ որդիները, թէև նրան հասակակից և աւելի տարիքոտ էին, նրան քեռի էին կանչում։ Եւ այդ խորթ չէր թւում փոքրիկ Քրիստափորին։ Նա արդէն մեծի տպաւորութիւն էր անում, տարիքին անհամապատասխան հասունութիւն և լրջութիւն ունէր։ Նրա քրոջ որդիները, նրա բոլոր հասակակիցները, անդամ անհամեմատ աւելի մեծերը ակնածում, պատկառում էին նրանից և կրում նրա զօրեղ ազդեցութիւնը։ Նրա անհատականութեան այս գիծը, որ շատ բնորոշ է նրա համար, յետագայում աւելի ևս երևան է գալիս։

1873—4 ուսումնական տարում, տասնևչորս տարեկան հասակում, Քրիստափորը աւարտեց ծխական դպրոցի դասընթացը։ Բոլորն անխտիր, թէ հոգաբարձուները և թէ ուսուցիչները, գնահատելով նրա բարձր ընդունակութիւնները և ուսման մեծ տենչը, ցանկանում էին ուղարկել նրան Թիֆ-

լիս՝ ուսումը շարունակելու։ Թիֆլիսը իր յայտնի Ուսուցչական Ինստիտուտով համարւում էր Կովկասի «ուսումնատենչ դաւառացի պատանիների գեղեցիկ երազների և ցնորքների առարկան»։ Շատ քչերը, միայն ընտրեալներն էին արժանանում նրա տեսութեան։ Այդ շատ քչերից մէկը եղաւ նաև մեր Քրիստափորը։ Բաղդը այս դէպքում նրան ժպտաց։ Բայց հրտեղից էր փողը։ Նրա հայրը թողել էր այգի, հող և այլն։ Ահա դրանց դիմաց նրա հօրեղբայրը հոգում է ուսման մասին։ Որոշ գումարով օգնում է նրան և դպրոցի հոգաբարձութիւնը, մի պայմանով միայն, որ Ուսուցչական Ինստիտուտի դասընթացն աւարտելուց յետոյ, պարտաւորւում է դաստուի պաշտօն ստանձնել հայրենի գիւղի ծխական դպրոցում։

Ահա այս ձևով և միջոցներով են ապահովում նրա միջնակարգ կրթութեան գործը։

Եւ Քրիստափորն անչափ գոհ էր։

III

1874 թւի աշնան սկզբին Քրիստափորը Թիֆլիսումն էր արդէն, Կովկասի մայրաքաղաքում և մտաւոր կենտրոնում։

Մի տարի պատրաստելուց յետոյ, նա մտաւ նախ Աղէքսանդրեան Ուսուցչական Ինստիտուտի քաղաքային դպրոցը, ուր նա սովորեց երկու տարի և ապա անցաւ իսկական Ինստիտուտը։ Թիֆլիսում նա ուսանեց ընդամենը վեց տարի. 1880 թւին աւարտեց Ինստիտուտի լրիւ դասընթացը փայլուն կերպով։

Պատանի Քրիստափորի բնաւորութեան գծերը այսեղ աւելի ևս զարգացան։ Հենց առաջին օրերից նա իր լրջութեամբ և խելքով գրաւեց ուսուցիչների ուշադրութիւնը, իսկ իր անկեղծութեամբ, պարզութեամբ և ընկերասիրութեամբ դառաւ աշակերտների սիրելին, նրանց կապող օղակը։ Այստեղ արդէն, աշակերտական նստարանի վրայ ակընայայտ են դառնում նրա բնաւորութեան երկու հիմնական գծերը—անձնազոհութիւն և այլասիրութիւն։ Նա զարմանալի հոգատար վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի իր շրջապատը, դէպի իր

դասընկերները և ծանօթները։ Մէկին՝ դասընկերին օգնում էր, նրա աշխատանքը թեթևացնելով, միւսին՝ իր աղքատիկ միջոցներից բաժին հանում, իր քրոջ որդու ուսման գործը ապահովելու համար նա մասնաւոր դասեր էր տալիս, չընայելով որ սաստիկ ծանրաբեռնուած էր դպրոցական աշխատանքներով։

Այս բոլոր անհատական բարեմասնութիւններից զատ, որ այնքան սիրելի էին դարձնում Քրիստափորին իր շրջապատի համար, նա միաժամանակ շատ զարգացած և կարդացած երիտասարդի համբաւ ունէր։ Վերջին տարիներում նրա միտքը արդէն սկսել էր զբաղուել հասարակական լուրջ խնդիրներով. նա սկսել էր կարդալ գիտական գրքեր...

Հետաքրքրական և ուշագրաւ շրջան էր։ Այդ ժամանակ Թիֆլիսում գոյութիւն ունէին աշակերտական խմբեր, որոնք զբաղւում էին «ինքնազարգացմամբ»։ Նրանք տալիս էին անդամավճարներ, ունենում էին մշտական հաւաքումներ, ունէին սեփական հարուստ գրադարան, որ կազմուած էր գլխաւորապէս սոցիալիստական, քաղաքատնտեսական և հասարակագիտական նշանաւոր գրքերից։ Ահա այդ «ինքնազարգացման» ղեկավարներից էր Քրիստափորը։

Նրանք կարդում և ուսումնասիրում էին Կարլ Մարքս, Զերնիշևսկի, Լաւրով, Միխայլովսկի, Պիսարև և այլն։ Այդ միջոցին Քրիստափորը զբաղւում էր նաև զուտ իմացաբանական, փիլիսոփայական դժուարին պրոբլէմներով։ Մի որոշ ժամանակ նա միանդամայն տարուած էր Կանտով՝ խրելով նրա գլուխ-գործոցի՝ «Զուտ բանականութեան քննադատութեան» ընթերցումի մէջ։ Սակայն Քրիստափորի և ընդհանուր աշակերտութեան հետաքրքրութեան գլխաւոր առարկան այնուամենայնիւ կազմում էին սոցիալական խնդիրները և հասարակական վարդապետութիւնները։

Աշակերտներն իրենց մտայնութեամբ աշխարհաքաղաքացիներ էին. խմբերին մասնակցում էին բոլոր ազգութիւններից անխտիր— հայ, ռուս, վրացի։ Նրանք իրենց համարում էին առհասարակ ճնշածների դատի պաշտպաններ, աշխատանքի սկզբունքի ներկայացուցիչներ, իսկ ամենից շատ մտածում էին ռուս գիւղացու մասին։ Այս վերջին պա-

հանջը շատ բնորոշ է այն ժամանակւայ ռուս հասարակական մտայնութեան համար։ Դեռ ևս չէր դադարել ռուս գիւղը, ռուս գիւղացին լինել ռուս լաւագոյն ինտելիգենցիայի մտածողութեան և գործունէութեան գլխաւոր առարկան։ Դեռ ևս հնչում էր հմայիչ կոչը՝ «դէպի գիւղ»։

Հասարակական այս տրամադրութիւնները հասել և ազդել էին Կովկասի մտաւոր կեանքի վրայ։ Թէև աշակերտութեան ճնշող մեծամասնութիւնը կազմում էին հայերը, բայց հայկական հարցը դեռ ևս գոյութիւն չունէր և չէր զբաղեցնում նրանց։ Առհասարակ ազգային հարց, փոքր ազգութիւնների խնդիր գոյութիւն չունէր նրանց համար այն ժամանակ։ Նրանց մէջ կային անգամ այնպիսի մտայնութեան տէր աշակերտներ, որ միանգամայն ժխտում, անօգուտ էին յայտարարում փոքր ազգութիւնների գոյութիւնը՝ ընդհանուր մարդկութեան շահերի տեսակէտից։ Մարդկութիւնը ոչինչ չի կորցնի, եթէ փոքր ազգութիւնները անհետանան կեանքի բեմից։ Այսպէս էին տրամաբանում շատերը, և նրման մտածողները աննշան թիւ չէին կազմում

Այդպիսի մտայնութեան դէմ դուրս եկաւ իր ամբողջ ոյժով պայքարելու Քրիստափորը։ Թէև նրա համար էլ դեռ ևս գոյութիւն չունէր, պարզ ձևակերպած չէր հայկական հարցը յատկապէս, սակայն նա խորապէս համոզուած էր, որ իւրաքանչիւր ազգ, լինի նա մեծ թէ փոքր, տեղ և իրաւունք ունի արևի տակ։

Եւ նա չի տեսնում մի արդարութիւն, մի բարձր սկզբունք, յանուն որի մեծ ազգերը իրաւունք ունենային կուլ տալու փոքր ազգութիւններին, մանր ժողովուրդներին։ Նրա կարծիքով, ինչ չափով որ նրանք մտածում են ռուս գիւղացու կարիքների և պահանջների մասին, նոյն չափով, եթէ ոչ աւելի, նրանք պարտաւոր են նաև մտածել հայ, վրացի գիւղացու մասին։ Այդ ժամանակ նա արդէն բաւականին պարզ հայեացք ունէր ազգային հարցի էութեան մասին։ Այդպէս է վկայում նոյնպէս նրա կեանքի և գործի ընկերը՝ Սիմէոն Զաւարեանը։ Նրա հայեցակէտը ազգային հարցի մասին ապագայում ոչ միայն փոփոխութեան չենթարկուեց, այլ աւելի ևս հիմնաւորուելով, դառաւ նրա հասարակական աշարհայեցողու-

թեան գլխաւոր հիմունքներից մէկը: Քրիստափորն իր այս մտայնութեամբ մեծապէս ազդեց իր ընկերների վրայ: Եւ երբ տասը տարի յետոյ, նրանցից շատերը կրկին հանդիպեցին իրար դարձեալ նոյն վայրում՝ աւելի հասունացած, բարձրագոյն կրթութեան տիրացած, այս անգամ ազգային հարցը նրանց համար կարևորագոյն խնդիրն էր արդէն:

Աշակերտական շրջաններից դուրս, Քրիստափորը մօտիկ յարաբերութիւն ունէր նոյնպէս ռուս յեղափոխականների հետ: Թիֆլիսում կային բանւորական կազմակերպութիւններ, որոնց հետ նա եռանդուն կապ էր պահպանում:

Այս մի քանի տարին, մանաւանդ վերջին երկու տարին, նրա համար մի ամբողջ կեանք էր, հարուստ և բովանդակալից: Նրա հասարակական դէմքը արդէն բաւականին պարզ էր:

IV.

Ահա այսպիսի պատրաստութեամբ և հասարակական տրամադրութիւններով 1880 թւի սեպտեմբերին վերադարձաւ իւր հայրենի գիւղը:

Նա գնում էր գիւղ ճիշտ այնպէս, ինչպէս գնում էին ռուս նարոդնիկները, ռուս լաւագոյն մտաւորականները՝ մեծ առաքելութեան վեհ գիտակցութեամբ:

Իւր խոստման համաձայն, նա ուսուցչի պաշտօն էր ստանձնել Վերին Ագուլիսի ծխական դպրոցում: Այս պաշտօնում նա մնաց ամբողջ չորս տարի:

Գիւղում նա և՛ ուսուցիչ էր և՛ հասարակական գործիչ: Շնորհիւ իւր մանկավարժական և գիտական պատրաստութեան, իւր անհատական բարձր յատկութիւնների, Քրիստափորը մեծապէս նպաստեց գիւղական դպրոցի և ուսուցչի նշանակութեան բարձրացման ժողովրդի աչքում: Նա շատ լաւ գիտակցելով գիտութեան մեծ դերը, ամեն կերպ աշխատում էր դպրոցը—որ գիտութեան միակ օրրան է գիւղում—դարձնել ժողովրդի փայփայանքի առարկան: Այդ նպատակով նա կազմակերպում էր ծնողական պարբերական ժողովներ, ուր խօսում էր դաստիարակութեան, մանկավարժական զանազան կարևոր խնդիրների մասին: Նա աչքի էր ընկնում իր ազատ վերաբերմունքով, մտերմական յարաբերութեամբ դէպի աշակերտները:

Այն ժամանակ աւելի ևս, քան այժմ, ուսուցիչը գիւղում, գաւառական միջավայրում ամեն ինչ էր և ոչ թէ լոկ դասատու: Բնական էր, որ նա կենդանի մասնակցութիւն և վճռական դեր պիտի խաղար Ագուլիսի հասարակական գործերի մէջ: Նա չէր կարող լուռ և անվրդով նայել, թէ ինչպէս գիւղի աղա-տղրուկները անխիղճ կերպով շահագործում են անհար գիւղացուն, ծծում նրա արիւնը: Եւ ամեն մի անգամ, երբ առիթ էր ներկայանում, նա հանդէս էր գալիս որպէս գիւղացու շահերի պաշտպան և բարձրաձայն հնչեցնում արդարութեան ձայնը: Նրան չէին սիրում գիւղի աղաները, բայց քաշւում, վախենում էին: Քրիստափորը նրանց անխնայ կերպով հարւածում, դատափետում էր և նրանց դիմակը պատռում ժողովրդի առաջ:

Դպրոցական պարապմունքներից յետոյ, Քրիստափորը մտնում էր ժողովրդի զանազան խաւերի մէջ, զբաղւում երիտասարդների, գլխաւորապէս արհեստաւորների հետ: Նա առաջ էր քաշում երիտասարդ ոյժերը, ներշնչելով նրանց իւր գաղափարները, աշխատելով ընդլայնել նրանց մտքի հորիզոնը, հրապարակ հանելով նրանց առջև հայ հասարակական կեանքի ժուլթ խորշերն ու ախտաւոր կողմերը: Այդ բոլորի հետ միաժամանակ նա ամենքին մղում էր դէպի հալալ և քրթնաթոր, արդար և ստեղծագործ աշխատանքը:

Ահա այս ձևով նա մեծ և կենդանի շարժում առաջ բերից գիւղում, գաւառական մթնոլորտում:

Քրիստափորը լուրջ կերպով աշխատում էր նաև երկու հարևան ազգերի, հայերի և թուրքերի մերձեցման, համերաշխութեան մասին: Այդտեղ էլ նա իւր յոյսը դրել էր նոր, մատաղ սերնդի վրայ: Նա համոզում էր թուրքերին, որ ուսում ստանան, հայոց դպրոց մտնեն: Նա ունեցաւ երեք թուրք աշակերտներ, որ մինչև այժմ էլ չեն մոռացել իրենց ուսուցչին: 1905 թւին, Քրիստափորի հոգեհանգստին ներկայ էին նաև նրա թուրք աշակերտները:

Այս չորս տարւայ գիւղական եռուն գործունեութիւնը հասարակական խոշոր նշանակութիւն ունեցաւ նոյնպէս իրեն՝ Քրիստափորի համար: Այդ միջոցին նա կարողացաւ մօտիկից դիտել կեանքը, ծանօթանալ մեր հասարակական

կեանքի վէրքերին, ցաւոտ կողմերին, ուսումնասիրել տառապող ժողովրդի, աշխատաւոր մարդու անթիւ կարիքները։

V

1885 թուին, ինչպէս յայտնի է, փակուեցին մեր ծխական դպրոցները։ Նա զրկուեց իր սիրած, փայփայած դպրոցից, բայց չյուսահատուեց, խորապէս հաւատացած լինելով արդարութեան վերջնական յաղթանակին։ Եւ մինչև իր կեանքի վերջին վայրկեանն էլ նա մնաց անյողդողդ իր հաւատի մէջ։

Այդ ժամանակ նա աւելի սուր կերպով զգաց, որ հասարակական յաջող պայքարի համար անհրաժեշտ է գիտութեամբ աւելի զինուած, աւելի պատրաստուած լինել։ Եւ ահա 1885 թուի աշնանը նա ճանապարհուեց դէպի Մոսկուա։ Քրիստափորը մտաւ Պետրովսկայա Ակադեմիան որպէս ազատ ունկնդիր։

Մոսկուայում նա մեծ եռանդով նուիրուեց հասարակական գիտութիւնների՝ սոցիոլոգիայի, պատմութեան, քաղաքատնտեսութեան ուսումնասիրութեան։ Հետաքրքրական շրջան էր այդ ժամանակը Ռուսաստանի համար։ —Մարքսի հասարակագիտական վարդապետութիւնը, պատմական մատերիալիզմը նուաճումներ էր անում ռուսական հողի վրայ։ Սկսել էր արդէն ռուս նարոդնիկական ինտելիգենցիայի մէջ մարքսիստական խմորումը։ Մտաւոր այդ շարժումը, անտարակոյս, չէր կարող չազդել նաև Քրիստափոր Միքայէլեանի վրայ։ Բայց նա յամենայն դէպս մարքսիստ չդառաւ։

Անհամեմատ աւելի գրաւում էր նրա միտքը ռուս սոցիոլոգիական-սուբիեկտիւիստական դպրոցը, ռուս նարոդնիկական գրականութիւնը։ Նա կարդում և ուսումնասիրում էր Հերցէնի, Չերնիշևսկու, Լաւրովի և Միխայլովսկու աշխատութիւնները։ Նրա հետաքրքրութիւնը նարոդնիկութեամբ տեսական չէր միայն։ Նա մօտիկ յարաբերութեան մէջ մտաւ ռուս նարոդովոլցիների հետ և սկսեց գործել նրանց շարքերում։

Մոսկուայում Քր. Միքայէլեանը լուրջ կերպով ծանօթացաւ նաև Հերբերտ Սպենսէրի սոցիոլոգիայի հետ։

Տեսական իր այդ աշխատանքներից զատ, նա եռանդուն ջանքեր էր թափում կազմակերպելու հայ ուսանողներին՝ նախապատրաստուելու համար ընդհանուր ոյժերով ապագայ հասարակական գործունէութեան։ Նրանք զբաղուում էին հասարակական խնդիրների քննութեամբ, պարզում իրենց համար զանազան հասարակական տեսութիւններ և որոշում իրենց կեանքի, ապագայ գործունէութեան ուղին։ Քրիստափոր Միքայէլեանն էր այդ աշխատանքներին շունչ տուողը։ Իր անկեղծութեամբ, աննման եռանդով, կազմակերպչական բարձր տաղանդով նա գիւրութեամբ հայ ուսանողներին հաւախմբում էր մի ընդհանուր գործի շուրջը, սերտ կերպով կապելով նրանց իր հետ։

Քր. Միքայէլեանը միայն երկու տարի մնաց Մոսկուայում. նիւթական միջոցների բացակայութեան պատճառով, նա ստիպուած եղաւ թողնել Մոսկուան և վերադառնալ հայրենիք, 1887 թուի գարնանը։ Բայց այդքան կարճատև ժամանակամիջոցումն էլ նա կարողացաւ մեծ պաշար ձեռք բերել, հասարակական գիտութիւններով սպառազինուել։

Վերադառնալով Կովկաս, նա դարձեալ մտաւ ուսուցչական ասպարէզը, նուիրուելով միաժամանակ ընդհանուր յեղափոխական գործունէութեան, թէ Թիֆլիսում և թէ գաւառներում։

VI

Այդ շրջանում ռուսահայ մտաւորականութեան մէջ ծայր էր տուել մի նոր շարժում, որ արագ և ընդարձակ նուաճումներ էր անում։ Թիւրքահայերի ազատագրման հարցն էր դրուած հրապարակի վրայ և դաղափարական բոլոր լաւ ոյժերը համախմբուում էին այդ մեծ դատի շուրջը։ Գրիգոր Արծրունին բարձրացրել էր իր հզօր ձայնը։ Անմահ Բաֆֆու կրակոտ և կենդանի քարոզները «Մշակ»-ի էջերին և առանձին գրքերով տարածուում էին հայ ժողովրդի բոլոր խաւերում և վառում մատաղ սրտերը։ Օր-աւուր տրամադրութիւնը բարձրանում էր և շարումը աւելի լայն ծաւալ ստանում։ 1890 թուի ամառը Կովկասն ընդհանրապէս, Թիֆլիսը մասնաւորապէս թիւրքահայ յեղափոխական շարժման մի հնոց էր ներկայացնում։ Էրզրումում կատարուած դէպքե-

ը յուզել էին ամբողջ կովկասեան հայութիւնը։ Մի նոր գաղափարներ սկսում էր հայ ժողովրդի քաղաքական և հասարակական կեանքում։ Խանդավառութիւնը ընդհանուր էր։ Ռուսաստանի մայրաքաղաքից եկել էր ուսանող Սարգիս Կուկունեանը, մի կրակոտ և գաղափարական երիտասարդ, կամաւորական խմբեր էր պատրաստում Տաճկահայաստան մտնելու համար։ Այս բոլորը տիրող բարձր տրամադրութեան արդիւնք էր։ Ամեն տեղ նրան խանդավառութեամբ էին ընդունում։ Ամբողջ հայ ժողովուրդը ակնապիշ հետևում էր այս աննախընթաց անցուդարձին։ Բոլոր հայ մտաւորականները փարել էին տաճկահայ դատին, Տաճկահայաստանի ազատագրութեան գործին։ Հայկական հարցի շուրջը կազմուել էին արդէն տարբեր խմբակցութիւններ, առաջ էին եկել զանազան հոսանքներ։ Այդ խմբակցութիւնները և հոսանքները տարբերւում էին իրենց ընդհանուր աշխարհայեցողութեամբ, իրենց առաջադրած պահանջներով, իրենց տակտիկով։ Բայց նրանց մէջ տիրում էր մի ցանկութիւն միայն—ընդհանուր և միացած ոյժերով վարել ու առաջ տանել տաճկահայ ժողովրդի ազատագրութեան մեծ գործը։ Բայց ինչպէս, ինչ ծրագրով, ինչ տակտիկով։ Եւ ահա սկսում են ծրագրային տաք վէճեր, երկար բանակցութիւններ այդ առաջնակարգ խնդիրների շուրջը։

Այդ բանակցութիւնների ժողովատեղը և առհասարակ այդ ամբողջ շարժման կենտրոնը Թիֆլիսի „Южные номера" հիւրանոցն էր, այժմեան „Ласкутъ"-ը։ Վէճերը և բանակցութիւնները ապարդիւն կերպով շարունակւում էին ամբողջ ամիսներ։ Ոչ մի հոսանք չէր կամենում միւսին որև է զիջում անել։ Միաժամանակ բոլորը շատ լաւ զգում էին համերաշխութեան, ընդհանրութեան միութեան անհրաժեշտութիւնը։

Այս շարժման մէջ էր նոյնպէս Քրիստափոր Միքայէլեանը։

Նա մինչև 1890 թուականն անմասն էր մնացել այդ ազգային, տաճկահայի ազատագրական շարժման մէջ։ Սա որևէ մասնակցութիւն չունէր տաճկահայ դատի շուրջը կազմակերպուած խմբակցութիւնների և հոսանքների մէջ։

Մինչև այդ թիւը նա դեռ ևս մնում էր ռուս յեղափոխական, ընկերվարական, համամարդկային գաղափարներ քարոզող։ Նա ամենամօտիկ կապ ունէր ռուս յեղափոխական կուսակցութիւնների հետ։ Մինչև այդ նա գործում և յայտնի էր «Միխայլով» անունով։

Բայց այդ նշանակալից թուականին նրա մէջ կատարւում է յեղաշրջում։ Նա դառնում է տաճկահայկական հարցի երդուեալ պաշտպանը և պաշտպան առաջնորդը։ —Ամեն մի ազգ ազատ պէտք է լինի, և իրաւունք ունի ազատ լինելու, ազատ, անկաշկանդ զարգանալու,—ասում էր նա։ Նա տեսնում էր, որ մի ամբողջ ժողովուրդ հիւծւում էր թիւրքական անարգ լծի տակ, զուրկ մարդկային ամենատարրական իրաւունքներից։ Այս գործը անհամեմատ աւելի սուր և անյետաձգելի էր, աւելի առաջնակարգ, քան զուտ դասակարգային խնդիրը։ Այսպէս էր մտածում և տրամաբանում սոցիալիստ-յեղափոխականը։ Եւ այդ օրից Քրիստափորը նետուեց հոուն գործի ասպարէզը և այլ ևս երբէք չհեռացաւ այդտեղից։

Քր. Միքայէլեանը ամենախոշոր անձնաւորութիւններից մէկն էր տաճկահայ դատի շուրջը համախմբուած, ինտելիգենտների շարքում։ Նրան էր վիճակուած այդ ինտելիգենտներին ի մի համախմբելու և գործի մղելու ծանր դերը։ Քրիստափորն ունէր այդ դերի համար բոլոր անհրաժեշտ բարեմասնութիւնները՝ տարաձայնութիւններ հարթելու բացառիկ շնորհք, կազմակերպչական փայլուն տաղանդ, հազուագիւտ տակտ, բարոյական մաքրութիւն, յարգանք դէպի հակառակորդները... Եւ նրան յաջողուեց հաւաքել մի ընդհանուր ծրագրի շուրջը որոշ յեղափոխական խմբեր և իր ընկերների հետ միասին հիմքը դրեց «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», որ շուտով ունեցաւ իր յատուկ օրգանը՝ «Դրօշակ»-ը։

Այնուհետև Քր. Միքայէլեանի կեանքի ու գործունէութեան միակ և գերագոյն նպատակն էր այդ։ Նա թողեց ամեն ինչ և սկսեց մի աստանդական կեանք, ամբողջովին նուիրուելով իր կուսակցութեան գործին։ Նա փայփայում էր իր կուսակցութիւնն այնպէս, ինչպէս փայփայում է ծնողն

իր սիրասուն զաւակին: Ամբողջ տասը տարի նա Կովկասում վարում էր մի տանջալից կեանք, լի անասելի զրկանքներով, անծայր նեղութիւններով, մշտապէս ենթակայ ոստիկանութեան հետապնդումներին, բանտի և աքսորի վտանգին:

Առաջին անգամ նա բանտարկուեց 1891 թուին, Թիֆլիսում և, կարճ ժամանակ բանտում մնալուց յետոյ, աքսորուեց Բիշինև: Հենց այդ միջոցին նրան յաջողուեց մի կերպ աքսորավայրից փախչել և կարճ ժամանակով մեկնել Բոլգարիա, Սոֆիա մայրաքաղաքը՝ այնտեղ սկսած և կիսատ մնացած «Դրօշակ»-ի № 1-ը խմբագրելու և լոյս ընծայելու համար: Նա աքսորավայրում մնաց մօտ մէկ տարի: 1892 թուին նա կրկին վերադարձաւ Կովկաս և նոյն եռանդով ու հաւատով շարունակեց աշխատել տաճկահայ դատի համար: Երկրորդ անգամ նա բանտարկուեց 1895 թուին, այս անգամ արդէն Բագուում:

Բայց ոչ բանտի և աքսորի սարսափը, ոչ էլ կեանքի ծանր զրկանքներն անկարող էին յետ կանգնեցնել նրան գործից, թուլացնել նրա հաւատն ու եռանդը դէպի իւր պաշտպանած արդար դատը: Երբ Կովկասի մի վայրում վտանգուում էր նա, անցնում էր անմիջապէս մի այլ շրջան: Բայց ուր էլ նա լինէր, Բագու թէ Թիֆլիս, կամ այլուր, նա դառնում էր յեղափոխական գործի կենտրոնը, համախմբելով իւր շուրջը տեղական ոյժերը և վառ կենդանութիւն առաջ բերելով նրանց մէջ դէպի գործը:

Ընդունելով նրա այս հալածական կեանքին, Քրիստափորն ստիպուած էր հոգալ և իւր ընտանիքի նիւթական ապահովութիւնը: Նա չէր կամենում ծանրանալ կուսակցութեան վրայ, ապրել կուսակցութեան հաշուով, թէև նրա ամբողջ կեանքը պատկանում էր «Հ. Յեղ. Դաշնակցութեան»: Իւր և իւր ընտանիքի ծախսերը նա հոգում էր լրագրական խղճուկ աշխատանքով: Երկար ժամանակ սրբագրիչի պաշտօն կատարեց «Новое обозрѣніе» թերթի խմբագրատանը: Այդ պաշտօնը նա վարեց մինչև 1898 թիւը, երբ նա ուղևորուեց արտասահման: Նա միաժամանակ աշխատակցում էր այդ թերթին և այնտեղ գրած ունի բաւականին յօդուածներ:

Նա ոչ միայն չէր օգտուում կուսակցութիւնից, այլ և իւր խղճուկ միջոցներից բաժին էր հանում ընդհանուր գործին: Հէնց առաջին օրերից նրա տունը յեղափոխութեան օջաղ էր, տան դուռը «ուխտի դուռ», բաց ամենքի առջև: Նրա աղքատիկ և համեստ սեղանը արամադրելի էր բոլոր ընկերների համար անխնայ: Քրիստափորի բացակայութեան միջոցին անգամ տան դռները բաց էին: Ընկերները յաճախ գալիս էին նրա տանը դիշերելու և օգտուում էին նրա տեղաշորերից: Պատմում են, որ նա յաճախ իւր մահճակալը տալիս էր ընկերոջը, իսկ ինքը յատակին էր պառկում:

Նա այնքան մեծ հեղինակութիւն էր վայելում ընկերների շրջանում, որ ոչ ոք նրանցից որևէ գործի չէր ձեռնարկում՝ առանց նրա հետ խորհրդակցելու, առանց նրա կարծիքն իմանալու: Նա գիտէր հէնց առաջին հայեացքից, առաջին հանդիպումից ազդել մարդկանց վրայ, հաւատ ներշնչել, իւր անսպառ եռանդով համակել նրանց և գործի ասպարէզ մղել: Նա ոչ մի ոյժ չէր արհամարհում, յետ չէր մղում: Նա կարողանում էր ամեն մէկին այս կամ այն չափով, այս կամ այն դէպքում օգտակար դարձնել ընդհանուր գործի համար: Նա գիտէր խելացի կերպով, իւր անմոռան տակտի շնորհիւ, օգտագործել անգամ կուսակցական հակառակորդներին: Շատ կարճ ժամանակամիջոցում Քրիստափորն ընդունակ էր այս կամ այն վայրում իւր շուրջը համախմբել մարդիկ և ստեղծել որոշ կազմակերպութիւն: Քանի-քանի վայրերում նա կարողացել է կազմակերպութիւն առաջ բերել, ուր տիրում էր ընդհանուր լքում, համատարած ապատիա: Օրինակ, 1901 թուին, երբ նա կարճ ժամանակով վերադարձաւ Կովկաս արտասահմանից, գործը ամեն տեղ դադարել էր, տիրում էր լքում, հիասթափութիւն, կազմալուծում: Նրան յաջողուեց Բագուում և այլ վայրերում հրիտասարդ ոյժերին կրկին ոտի հանել, ոգեւորել և կազմակերպութիւն առաջ բերել:

Քրիստափորը մի այլ կողմից ևս անզուգական էր՝ ընկերների շարքերում գոյութիւն ունեցող դժգոհութիւնները և երկպառակութիւնները վերացնելու, յուզմունքները խաղաղացնելու տեսակէտից: Շատ անգամ նրա մի խօսքը, նրա

ՀՀ ԳԱ Գրադարան

մի հայեացքը, անգամ միայն նրա ներկայութիւնը բաւական էր, որ ամենքը մոռանային ներքին փոքրիկ և աննշան տարաձայնութիւնները, փոքրիկ և աննշան՝ մեծ և ընդհանուր գործի հանդէպ։

VII.

Վրայ հասան 1895-96 դժբախտ տարիները, տեղի ունեցաւ հայկական մեծ աղէտը—տաճկահայերի ջարդը՝ մի կողմից և գաղթը՝ միւս կողմից։ Այս բոլորին յաջորդեց սպանիչ ռէակցիան ամբողջ Կովկասում։ Դրութիւնը անտանելի էր։ Կովկասահայ մտաւորականութեան մէջ սկսած տեղատուութիւնը հասաւ ծայրահեղ աստիճանի։ Այս տեղատուութիւնն սկիզբն էր առել դեռ ևս աւելի վաղ, այն օրերից, երբ իրականութիւնը ցոյց տուաւ, որ ,,գործը անորոշ ժամանակով՝ բացի զոհողութիւնից, ոչ մի տեսակ դափնիներ չէ կարող խոստանալ ոչ ոքի։ Եւ հայկական հարցի շուրջը համախմբուած մտաւորականներից շատ-շատերը չքացան այնպէս, ինչպէս ,,քամու մի շնչով ստեղծուած ալիք''։ Այսպէս է բնորոշում նրանց Քրիստափորը։ Բայց դրանք ոչ թէ հասարակ, թէև ինտելիգենտ, մարդիկ էին, այլ ,,յեղափոխական կենտրոններում բաղմելու համար գլուխ պատռող պարոններ''։ Դրանք այն ինտելիգենտներն էին, որ ,,արժան գնով ազատութիւն ձեռք բերելու յոյսերով հարբած, մօտեցան յեղափոխական գործին, կարծես վախենալով, որ էգուց-միւս օրը յանկարծ առանց իրենց անմեղ աղմուկին էլ Հայաստանը անկախ երկիր կը հռչակուի և յետոյ այդ հանդիսաւոր օրը իրենք կը մնան առանց դափնիների''։ Դրանք, վերջապէս, այն ինտելիգենտներն էին, որոնք ,, 1890-91 թուականներին իրար հետ մրցում էին հայ ժողովրդի ազատագրութեանը նուիրուելու փառաւոր խոստումներով''։ Իսկ յետոյ, հենց յաջորդ 1891-92 թուականներին, երբ Կովկասի վրայով անցնում է ռէակցիայի թեթև ալիքը, բոլոր նրանք՝ ,,հաւատարիմ իրենց մօր կաթի հետ ծծած սարկական բնազդների՝ փախչում են ազատ վայրեր, ոտի տակ տալով բոլոր այն տարրական պարտաւորութիւնները, որ ծանրանում էին նրանց վրայ այդպիսի մի դժուար պատմական րոպէում»։

Աւելի նախանձելի պատկեր չէր ներկայացնում տաճկահայ մտաւորականութիւնը։ Այդ օրուանից «տաճկահայ ինտելիգենտի իդէալը դարձաւ ամբողջ երկրագունտը՝ մինչև գոլարների հայրենիք Ամերիկան, իսկ ռուսահայինը՝ Բագուն, ուր մարդիկ երբէք դէպի վեր, դէպի բարձր, դէպի իրենցից հեռուն չեն նայում, այլ միշտ դէպի ներքև, դէպի երկրի տակը, դէպի դժոխային այն խաւարը, ուր 150-200 սաժէն խորութեան անդունդներում թաղնուում է նաւթաջրի կախարդիչ փայլը»։

Ահա ինչպիսի ցասումով է խօսում Քրիստափորը այդ դասալիքների մասին։ Խորունկ ցաւով, անհունապէս վշտացած՝ գրում է նա նոյնպէս այն մարդկանց մասին, որոնք յանուն գերագոյն շահերի միայն թունաւորում են հասարակական կարծիքը կամ օր ու գիշեր օդը թնդացնում յանուն բանուորական «յաւելեալ աշխատանքի», բայց ստոյիկօրէն մնում են սառնասիրտ մի ամբողջ ժողովրդի «յաւելեալ արեան» դիմաց։

Յաւելեալ արիւն. յաճախ նա գործ էր ածում այս նշանաւոր և իմաստալից խօսքը։ Այս խօսքը մի ամբողջ վարդապետութեան նշանակութիւն ունէր։ Ուր «յաւելեալ արեան» խնդիր կայ, այնտեղ երկրորդ գծի վրայ պէտք է դրուի «յաւելեալ աշխատանքի» հարցը։ Այս էր նրա խորին համոզումը։

Այսպէս էր դրութիւնը և տրամադրութիւնը տեղատուութեան դեռ առաջին օրերին, երբ ռէակցիան դեռ ևս ուժեղ չէր և չէր սրսկել իր մահացու թոյնը հանրութեան սրտի խորքը։ Տաճկահայերի ջարդից և գաղթից յետոյ՝ լքումը կատարեալ դառաւ։ Սկսեցին ամենուրեք հալածանք, աքսոր, բանտ... Այդ ծանր օրերին գլուխ էին բարձրացրել բոլոր վատ հոգիները, անգամ նախկին յեղափոխականներից շատերը։ «Այն ժամանակ, դառնութեամբ գրում է Քր. Միքայէլեանը, երբ դուք՝ այնպիսի չարագործութեան հանդէպ, ինչպիսին են հայկական կոտորածները, բռնուած էք անսահման ցասումի սուրբ զգացմունքով միայն. այն ժամանակ, երբ հայութիւնը ջնջելու բացարձակ քաղաքականութեան դիմաց, դուք կարող էք ունենալ մի անընկճելի ձրգ-

տում միայն՝ ազատել վերջապէս այսքան չարիքների միակ պատճառից,—ահա այդ ժամանակ, ասում ենք, ձեր շուրջը, այս ու այն տեղ, դուք տեսնում էք հայ մարդիկ, որոնք ոտնակոխ անելով բացարձակ ճշմարտութիւնը, պատրաստ են բարին չար անուանել ու չարը՝ բարի. պատրաստ են համարեա թէ արդարացնել մարդկային պատմութեան մէջ չտեսնուած բարբարոսութիւնը. պատրաստ են անօրինակ բռնութեան հեղինակի մեղքը փաթաթել այդ բռնութեան դէմ կռուող բանակի վզին»։ Այդ վատ հոգիները, չկարողանալով, աւելի ևս չկամենալով, թափանցել կատարուած անցուդարձերի խորը, առանց քրքրելու այդ մեծ ազէտի իսկական պատճառները, անպատիւ կերպով ցեխ էին շպրտում ազատագրական շարժման մարտիկների և ղեկավարների հասցէին և անուանարկում կռիւը տաճկահայ դատի համար։

Բայց այդ բոլորի դիմաց կանգնած էր Քրիստափորը՝ իր սակաւաթիւ ընկերներով, աննկուն, աներեր, յաղթական կաղնու նման։ Նրա հետ էր միշտ էլ կրակոտ և նեարդոտ Ս. Զաւարեանը, նրա անբաժան ընկերը։ Քրիստափորի՝ արդէն կրօնական ընոյթ կրող՝ հաւատը դէպի մեծ գործը մի րոպէ անգամ չէր տատանուել։ Հասարակական կեանքի նման հողմերը և ելևէջները, կատաղող հասարակական մակընթացութիւնը և տեղատուութիւնը չէին կարող նրան յեղաշրջել, գործից շեղել և յուսաբեկ անել։ Նա շատ լաւ ծանօթ էր ազգերի պատմութեան, հասարակական կեանքի օրէնքներին։ Նա գիտէր, որ այս ծանր օրերը, փչող յետադէմ հողմերը երկար չեն տևելու։ Եւ նա յոյս և հաւատ էր հաղորդում թոյլ և երերուն, բայց մաքուր հոգիներին. իր առողջ և երկաթեայ տրամաբանութեամբ մերկացնում ամբոխային մտածողութեան հիմքերը, ցրում տիրող տարակուսանքները... Յատկապէս այդպիսի ծանր րոպէներին, այդպիսի հասարակական ճգնաժամի օրերին աննման փայլ և կենդանութիւն էր ստանում նրա գործը, հուժկու՝ նրա խօսքը, հմայիչ՝ ամբողջ էութեամբ։ Ո՞րքան խղճուկ և անփայլ կլինէր կեանքը, եթէ իրօք չլինէին նման հոգիներ...

Տաճկահայ դատի անձնուէր պաշտպանին անհուն վիշտ պատճառեց նոյնպէս դիւանագիտութեան, երոպական մեծ պետութիւնների բռնած դիրքը։ Քրիստափորի համար շատ պարզ էր նրանց յանցաւոր անգործունէութիւնը, նրանց այս կամ այն չափի մեղսակցութիւնը հայկական կոտորածների, տաճկահայերի դատի վիժման գործում։ Պարզ էր նաև երոպական ժողովուրդների հասարակական կարծիքի անպայման անհրաժեշտութիւնը։ Նա գիտէր. որ երոպական ազգերը շատ աղօտ և անճիշտ հասկացողութիւն ունեն հայերի մասին, չը գիտեն մեր պատմութիւնը, պարզ գաղափար չունեն մեր կատարած և կատարելիք կուլտուրական դերի մասին Մերձաւոր Արևելքում, վերջապէս, նրանց համար պարզ չէ հայոց հարցն ամբողջապէս։ Նա գիտէր միաժամանակ, որ ոչ մի ազգ, մանաւանդ փոքր ազգ, չի ազատագրուել միմիայն իր սեփական ոյժերի շնորհիւ։ Դրա լաւագոյն ապացոյցը կազմում էր Բալկանեան քրիստոնեայ մանր ժողովուրդների ազատագրութիւնների պատմութիւնը։

Ահա այս կարևոր խնդիրը և մի շարք զուտ կուսակցական հարցեր ստիպեցին Քրիստափորին թողնել Թիֆլիսը և առժամապէս ճանապարհուել դէպի արտասահման։

VIII

1898 թ-ի աշնանը նա արդէն Եւրոպայումն էր, Ժընէվում։

Ժընէվ հասնելուն պէս, Քրիստափորը իսկոյն գործի դիմեց։ Նա վրդովուեց արտասահմանում ապաստանած ընկերների հանգիստը, հանախմբեց նրանց և գործի մղեց։ Ո՞րն էր այդ գործը։ — Անհրաժեշտ էր հասարակական կարծիք ստեղծել Եւրոպայում յօգուտ հայկական դատի, ոյժ տալ կուսակցութեան կենտրոնական օրգանին՝ «Դրօշակին», լուրջ և գիտական յօդուածներով ու աշխատութիւններով լուսաբանել, վերլուծել ռէակցիայի պատճառները, ցրել յեղափոխութեան և յեղափոխականների հասցէին շպրտուած անհիմն և անարգ մեղադրանքները, բարձրացնել հասարակական ընդհանուր տրամադրութիւնը և այլն։

Այդ ժամանակ էր, որ նա գրեց իր առաջին նշանաւոր յօդուածաշարքը—«Ամբոխային տրամաբանութիւն» վեր-

նագրով։ Այս ուշագրաւ և գիտական աշխատութեան մէջ նա ցոյց է տալիս ամբոխային տրամաբանութեան արատները— „Post hoc, ergo protper hoc“, «այս դէպքից յետոյ, ուրեմն, այս դէպքի պատճառով»։ Այսպէս է տրամաբանում ամբոխը, լինի նա հասարակ մարդկանցից, թէ ինտելիգենտներից կազմուած՝ այդ միևնոյն է։ Որովհետև կոտորածները Տաճկաստանում տեղի ունեցան յեղափոխական շարժումներից յետոյ, ուրեմն, հետևեցնում է ամբոխային տրամաբանութիւնը, յեղափոխութիւնը և յեղափոխականներն էին այդ մեծ աղէտի պատճառը։ Այդպիսի մտածողները միշտ էլ մնում են պատմական-հասարակական երևոյթների մակերևոյթի վրայ՝ առանց թափանցելու նրանց խորը։ Այդ տրամաբանութեան կատարեալ սնանկութիւնը, այդ մեղադրանքների անարժէք լինելը ցոյց տալու համար, Բ. Միքայէլեանը այս հարցը վերլուծման է ենթարկում շատ բազմակողմանի կերպով, մի շարք պատմական փաստերի, անթիւ եւրոպական անուանի հեղինակների վկայութիւնների հիման վրայ նա ապացուցանում է, որ «հայկական կոտորածների բուն պատճառներն են մի կողմից տաճիկ կառավարութեան գիտակցօրէն ընդունած վճիռը՝ նուազեցնել հայերի թիւը Հայաստանում, միանգամայն անկախ յեղափոխական շարժումներից, և, միւս կողմից, Եւրոպայի քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ։ Յեղափոխական շարժումը ոչ միայն հիմնական պատճառ, այլ և պատրուակ կամ առիթ չի ծառայել, և չենք կարող համարել։ Ինչու։—Երբ կան հիմնական պատճառներ որևէ երևոյթի առաջ գալու համար, առանց ակներև «առիթի» էլ երևոյթը զարգանում է։ Իսկ երբ չկան հիմնական պատճառներ, նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում։ «Երբ կան, ընդհակառակը, հիմնական պատճառներ, հարկաւոր դէպքում «առիթ» կամ «պատրուակ երբէք չի պակասիլ. իսկ երբ կան հիմնական պատճառներ, դրանց դէմ կռուող բոլոր միջոցները ոչ միայն ՁՆասակար չեն կարող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պէտք է համարուեն»։ Ահա այս հիմնական դրութիւններից ելնելով, նա գտնում է, որ յեղափոխական շարժումը ոչ միայն անխուսափելի, ոչ միայն իրաւացի և հասկանալի էր,

այլ և միանգամայն նպատակայարմար, վաղուց ի վեր սպասելի և պատուաբեր երևոյթ էր։

Այս աշխատութիւնից յետոյ, նա տուաւ նաև այլ յօդուածներ, ուր շօշափում էր նոյնպէս ժամանակի ամենակենսական, այրող հարցերը։

Նա չէր կարող սակայն բաւականանալ միայն կաբինետային աշխատանքով և երկար ժամանակ հրապարակախօսութեան նուիրուել, որքան էլ այդ անհրաժեշտ էր։ Պէտք էր ոչ միայն հայ ժողովրդի, այլ և Եւրոպայի մէջ հասարակական կարծիք և տրամադրութիւն ստեղծել՝ ի նպաստ հայկական դատի։ Նրա մշտական կայանը թէև Ժընէվն էր, բայց նա լինում էր ամեն տեղ, Եւրոպայի զանազան մասերում, մանաւանդ Ֆրանսիայում՝ Փարիզում։ Հայ դատի անմոռաց պաշտպանը այցելում է օտար դեմոկրատ հրապարակախօսներին, դիմում անում անուանի և ազդեցիկ հասարակական գործիչներին—Ժան Ժօրէսին, Քլեմանսօյին, Անատոլ Ֆրանսին, Պրէսանսէին, Պիեռ Քիարին և այլն։

Ամեն տեղ և ամենքի կողմից հայ հայրենասէրի կոչը սիրալիր և բարեացակամ ընդունելութիւն է գտնում։ Նրան յաջողւում է այս բոլոր նշանաւոր ֆրանսիացիներին համախմբել հայ դատի շուրջը և հրատարակել „Pro Armenia“ հանդէսը Փարիզում։ Բացի այդ, լոյս է տեսնում ֆրանսերէն զանազան յօդուածներ և գրքեր՝ նուիրուած հայոց հարցի բազմակողմանի լուսաբանութեան։ Նա ոչ մի ժամանակ և ոչ էլ եռանդ էր խնայում եւրոպական պրօպագանդի գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու և իսկական նպատակին ծառայեցնելու։

* * *

Քրիստափորը հայ դատի շուրջը որոշ հետաքրքրութիւն և շարժում առաջ բերեց նաև Գերմանիայում։ Այդ նպատակով, 1902 թ-ին նա գնաց Բերլին։ Իր սովորութեան համաձայն, նա բոլոր ուսանողներին ոտքի հանեց, յանդիմանեց՝ թէ ինչու նրանք մինչև այժմ ոչինչ չեն ձեռնարկել և արել այդ ուղղութեամբ Գերմանիայում և յորդորեց հայ ուսանողութեան գերմանական մասուլը զբաղեցնել հայոց

հարցով, յաջողեցնել մի հարցանդում Ռայխստագում, հայասէր դեմոկրատ գերմանացի անուանի մարդկանց ուշադրութիւնը հրաւիրել մեր դատի վրայ և այս ճանապարհով համակիր հասարակական կարծիք ստեղծել։ Նա ինքը ներկայացաւ անձամբ ընկերվարութեան պարագլուխ Բեբելին և խօսեց նրա հետ հայոց հարցի մասին։ Քրիստափորի խօսակցութիւնը աւելի շուտ հարցանդման ընոյթ ունէր։ Նա յիշեցրեց մեծ սոցիալիստին Ինտերնացիոնալի այն որոշումը, որ պարտաւորեցնում էր սոցիալիստական կուսակցութիւններին զբաղուիլ հայոց հարցով, և այժմ հայ դատի ներկայացուցիչն ուզում էր իմանալ, թէ մինչև օրս ինչ է արել այդ ուղղութեամբ գերմանական սոցիալիստական կուսակցութիւնը։

Բեբելի պատասխանը պարզ էր։ Մինչև այդ օրը ոչինչ չէր արուած։ Նա խոստացաւ հարցանդում անել Ռայխստագում, միաժամանակ աւելացնելով, թէ դա առանձին արժէք չի ունենայ և նախապէս կարելի է ասել կանցլերի պատասխանը։ Հարցանդումը տեղի ունեցաւ, և կանցլերը տուաւ շատ կտրուկ պատասխան. «Մենք չենք կարող ամեն հարցով զբաղուել»։

Բայց Քրիստափորին աւելի զբաղեցնում էր հասարակական կարծիք պատրաստելը։ Նա այնքան էլ չէր հաւատում դիպլոմատիային։ Բայց այս տեսակէտից էլ Բեբելը առանձին լաւ չէր սպասում։ Նա խորհուրդ է տալիս աւելի պրոպագանդ մղել Ֆրանսիայում. այնտեղ ժողովուրդն անհամեմատ աւելի պատրաստակամութիւն է ցոյց տալիս, տարբեր խառնուածք և հակումներ ունի և այլն։ Այլ է Գերմանիայում։

Բայց չնայած այդ բոլորին, յամենայն դէպս Գերմանիայում ևս գործի սկիզբը դրուեց։ Հայ ուսանողների մէջ կենդանի շարժում և հետաքրքրութիւն սկսուեց, համաժողովներ կազմակերպուեցին, Բերնշտայնը դասախօսութիւն կարդաց հայոց հարցի մասին, յօդուածներ գրուեցին Գերմանական թերթերում և այլն։

Մինչև այդ ժամանակ հայերի մասին գերմանացիք լսում էին միայն միսիոնարներից, որոնք կրօնական միսսիայով ճանապարհորդութիւն էին կատարում Հայաստանում։

Բայց այդ օրից ի վեր հայոց հարցը դրւում է գերմանական հասարակութեան առաջ իր իսկական բնոյթով, որպէս զուտ քաղաքական շարժում։

* * *

Ընդհանրապէս եւրոպացիների մէջ Քրիստափորը շատ լաւ ընդունելութիւն գտաւ։ Բոլորը հիանում էին այս մարդով, որ միաժամանակ «հայ ժողովրդի տառապանքի և ազատութեան մարմնացումն էր»։ Նրանք ոչ միայն հիանում, այլ և պատկառանք էին զգում հայ մարդու առաջ։ — «Երբէք չը պիտի մոռանամ աշնանային այն օրը՝ 1900 թ-ին, երբ նա ինձ այցելութեան եկաւ՝ «Pro Armenia»-ի հրատարակութիւնից մի քանի ամիս առաջ և մենք առաջին անգամ հանդիպեցինք իրար, Բուրգոյնի մի փոքրիկ գիւղում։ Թէև անծանօթ՝ իր առաջին խօսքերից և առաջին հայեացքից՝ նա տիրաբար իշխեց իր խօսակցին։ Այդ փոքրիկ, թուլակազմ մարդը—շփոթուած քայլուածքով, որ՝ հակառակ իր ալեխառն մազերին՝ դեռ տարիքաւոր չէր և պահպանել էր մանկական աչքերի յստակութիւնը, խօսում էր մի ձայնով՝ միաժամանակ մեղմ և խռպոտ, հմայիչ և հրամայական։ Նրա տժգոյն կերպարանքը, հիւծուած՝ երկար, անանձնական տառապանքից, ցաւագնօրէն յայտնում էր, որ նա զգացել և կրել է իր հալածական և «մարտիրոսացած բոլոր եղբայրներ»-ի տանջանքները և որ նա արիւն է թորել բոլոր նրանց վէրքերով եւ լացել նրանց արցունքով։ Սակայն այդ դէմքը ասում էր եւ այն, որ ինքը նրանցից չէ, որոնք ընկճուում են տանջանքի առջև, և իւրայիններին դէմ գործուած ամեն մի ոճիր, արծարծում էր նրանց մէջ հաստատուն վճիռ՝ բնաւ չ'ենթարկուել ճակատագրին և պատրաստել աւելի լաւ օրեր՝ տրամադրելի բոլոր միջոցներով, սկսած ամենախաղաղամիտ և խորթափանց բանականութիւնից մինչև անխուսափելի բռնադատումը, երբ այլևս չկայ ուրիշ միջոց։ Եւ այնտեղ, խաղաղ հովիտի բարձրութեան վրայ, ուր երեկոյեան մութը իջնում էր եղևնու անտառների և արդէն թափուր դաշտերի վրայ՝ Միքայէլեանի հոգին դրոշմուեց իմ մէջ։ Ու այնուհետև՝ մոտիկ լինէր նա թէ հեռու, ես հայկական դատի վերաբերմամբ,

ոչինչ չեմ ասել, ոչինչ չեմ գրել, ոչինչ չեմ արել, առանց հարցնելու ինքս ինձ, թէ ինչ կը մտածէր նա՝ այս խօսքի, այս նախադասութեան, այս արարքի մասին» . . .

Այս խօսքերը պատկանում են մի եւրոպացու գրչի՝— յայտնի Պիէր Քիառին։

Ահա ինչպիսի տպաւորութիւն է ստացել Քրիստափորից, ինչպիսի հիացմունքով է խօսում նրա մասին մի օտար, եւրոպացի մարդ։

IX

1905 թւի գարնան սկիզբն էր։ Դեռևս Սասունի մի բուռն կարիչների՝ Անդրանիկի եւ իր խմբի հերոսական քաջագործութիւնները, զրաղեցնում էին եւրոպական մամուլը, հիացնում էին հայկական դատի և ազատագրութեան համակիրներին։ Եւրոպական հասարակական կարծիքը կը-ին յուզած էր։ Կազմակերպւում էին համակրական ցոյցեր ինպատ տաճկահայ դատին, տեղի ունենում զանազան վայրերում բազմամարդ ժողովներ, եւրոպական մեծ պետութիւնների ուշադրութիւնը հրաւիրում հայոց հարցի վրայ, նրանց միջամտութեան անհրաժեշտութեան վրայ շեշտում...

Իսկ Այնտեղ, երկրում «հիւանդ մարդը», Աբդիւլ-Համիդը առաջ էր տանում իր արիւնոտ մեքենայութիւնները, ոչնչացման և ջարդի իր աւանդական քաղաքականութիւնը։

Փոթորկւած էր Քրիստափորի հոգին։ Նրա մէջ յղանում, հասունանում էր մի հոյակապ միտք, վրէժի այնպիսի մի ակտ, որից պիտի հիմնապէս ցնցւէր սուլթանների երկիրը, դրա հետ միասին և ամբողջ անիրաւ Եւրոպան։

Նա ինքն էր վարում և պիտի իրագործէր այդ մեծ ակտը։ Անգամ նրա ձեռքի և մտքի ստեղծագործութիւնն էր վրիժառու գործիքը։

Նա այն մարդկանցից, այնպիսի հասարակական և յեղափոխական գործիչներից չէր, որոնք ուրիշներին են մղում դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, դէպի մարտի և արեան դաշտը, իսկ իրենք մնում գործից հեռու, ապահովութեան մէջ։ Նա միշտ այնտեղ էր, ուր կարեոր գործ կար, լինէր այդ արեան, թէ խաղաղ, պրոպագանդի կամ կազմակերպչական գործ, այդ միևնոյն է։

Մարտի 4-ին Քրիստափորը Վիտոշի լանջերի վրայ էր, Կնեաժէվօ գիւղի մօտ, իր մի քանի հայ և մակեդոնացի ընկերների հետ։ Քրիստափորի հետ էր նաև իր կորիւնը— Էդուարդը։ Նա եկել էր այդտեղ փորձելու իր հնարած գործիքը, ռումբը։ Փորձը թէև յաջող էր, բայց մի փոքրիկ անզգուշութեան շնորհիւ, որից ռումբը պայթեց, սպանուեցին Քրիստափորը և Էդուարդը։

* * *

«Յիշում եմ պատահարը, գրում է ականատես ընկերը. սև մութը պատեց ձորակը, և երբ քեզ ձիւնում թաղած օգնել էի ուզում, ծալած ոտքերդ շտկում, արիւնոտ կուրծքդ, ձեռքդ, գլուխդ դիտում, դու հևում էիր խոր, ցաւոտ կերպով։ Հայեացքդ մշուշապատ ինձ էիր դիտում առանց թարթելու։ Ուզում էիր խօսել, պատմել, կտակել մի մեծ, սրբազան խորհուրդ, որ կար հոգուդ մէջ. փորձեցիր շշնջալ, բայց լեզուդ չը յայտնեց...

Սպասում էիր մտքով, զգում էիր ուժեղ կերպով առանց արտայայտել կարենալու, և քո ծով հայեացքը... ինձ մաշում էր, ցաւով վառում։

Տպաւորիչ դէպքերի հետաքրքիր ծալքեր ունի կեանքը, բայց հայեացքդ... հայեացքդ անմոռանալի է։ Ես յիշում եմ այդ հայեացքը ամեն անգամ, երբ մեր իրականութեան մէջ մի որևէ նոր հասարակական կնճիռ է առաջանում։

Վէրքդ կապեցի շապիկից, ձիւն դրի տաքացած ճակատիդ, որ հանգստացնեմ վիրաւոր գլուխդ, բայց դու պառկած մէջքիդ՝ տնքում էիր, և կամաց-կամաց մարւում էիր։ Խաղաղւում էր փոթորկոտ միտքդ և հայեացք էլ աւելի տարօրինակ, էլ աւելի խորհրդաւոր էր դառնում։ Վերջին անգամ կուրծքդ ալեկոծւեց ուժգնօրէն և դու վերջացար՝ իբրև մարմին...

Աչքերդ այժմ նայում էին հեռու Վիտոշի բարձրունքներին և կարծես՝ դու դիտում էիր Սասնոյ կատարները, ուր «սեւ ամպն էր եկել, կայծակը ճայթել, բայց խոտոր անցել» . . .

Կարօտում էիր, բայց կարօտ սրտով չը պիտի գնայիր այս աշխարհից։

Բոլոր ընկերների կողմից ծունկի եկայ առջևդ, պինդ-համբուրեցի բարձր ճակատդ, վստահեցրի, որ բոլորը պիտի գնան՝ նվիրելով հաւատարիմ, սիրած իդէալիդ և քո գծած ճանապարհիդ։ փակեցի աչքերդ, ջերմ համբուրեցի նրանց։ Մակեդոնացիները ծունկի եկած լալիս էին . . . «Էդեարդի», սիրած կորիւնիդ մօտ պառկեցրինք, որ շարունակես շոյել ու գուրգուրել տառապած երկրի սիրած զաւակին...»։

Քրիստափորի մահուան լուրը արագ կերպով տարածուեց ամենուրեք։ Դառնագին արտասուեցին եւ սգացին նրա որբացած ընկերները, խորապէս ցաւ զգացին եւ այն բոլոր օտարները, որոնք երբևիցէ գործ էին ունեցել Քրիստափորի հետ։

* * *

Թաղումը կատարուեց օտար՝ թէև հիւրընկալ հորիզոնի տակ, Բոլգարիայի մայրաքաղաք՝ Սոֆիայում, մարտի 10-ին (1905 թ.)։ Թաղման ներկայ էր անթիւ բազմութիւն՝ կազմուած գլխաւորապէս բոլգարներից, մակեդոնացիներից և հայերից։

Ներկայացուցիչներ կային գրեթէ բոլոր կուսակցութիւններից։

Այսպէս, գաղափարի ազնիւ զինուորն ընկաւ իր փայփայած մեծ ծրագրի, իր կեանքի միակ նպատակի համար, հայ ժողովրդի ազատագրութեան մեծ ճանապարհին . . .

Ք. ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

I.

Կան հազուագիւտ դէմքեր, որոնց կեանքն ու մտածողութիւնը, գործն ու խօսքը վսեմօրէն ներդաշնակում են իրար, առանց որև է աններդաշնակ ակորդի։

Այդպիսի հազուագիւտ մարդկանցից էր նաև Ք. Միքայէլեանը։

Նման մարդկանց առօրեայ կեանքից, կենդանի գործունէութիւնից ինքնին բղխում է մի ամբողջ, ներդաշնակ և միաձոյլ աշխարհայեցողութիւն։ Եւ, միւս կողմից, այդպիսի անձնաւորութիւնների ուսումնիրից, նրանց ընդհանուր աշխարհայեցողութիւնից և կենսահայեցողութիւնից կարելի է դուրս բերել և գծել նրանց անհատական դէմքը, տալ խառնուացքի գլխաւոր գծերը։

Քրիստափոր Միքայէլեանի ընդհանուր աշխարհայեցողութեան ամենահիմնական գծերը դրուած են իրօք նրա կեանքի և գործունէութեան մէջ։

Նա իր կոչումը գտել էր գործի, կենդանի գործի մէջ։ Ժամանակ չունէր նա ոչ կաբինէտային գիտական աշխատանքի և ոչ էլ հրապարակախօսութեան համար։ Դրա պատճառը պէտք է որոնել թէ նրա անհատական խառնուացքի և թէ այդ ժամանակւայ հայ իրականութեան յատուկ պայմանների մէջ։ Կենդանի գործ էր պահանջւում, և նա արձագանք էր տալիս այդ առաջնակարգ պահանջի ձայնին։

Բայց չնայած դրան, չնայած որ նա միշտ էլ գտնւել է կեանքի յորձանուտ հոսանքի, եռուն գործի մէջ, գտել է յամենայն դէպս հնար և միջոց գրելու այս կամ այն հասարակական երևոյթի կամ խնդրի մասին։ Եւ այն խնդիրները,

որ նա ուսումնասիրութեան կամ վերլուծման առարկայ է դարձրել, եղել են բացառապես այժմէական։

Նա գրել է, անկասկած, շատ քիչ։ Բայց ինչ որ նա գրել է, ինչ որ նրա գրչի տակից դուրս է եկել, խիստ ուշագրաւ են և գիտական միանգամայն։

Նրա առաջին նշանաւոր աշխատութիւնն է «Ամբոխային տրամաբանութիւնը», գրուած 1900 թուին։ Նոյնքան, անգամ աւելի, լուրջ և գիտական գործ է նրա երկրորդ պատմական հասարակագիտական աշխատանքը՝ «Պատմական չարիք»-ը, գրուած 1901 թուին։ Այս երկու մեծ աշխատանքները, ինչպէս և մի քանի ուրիշ գրուածներ, լոյս տեսան Ժընէւում 1906 թուին առանձին գրքով, որ կրում է «Ցեղափոխականի մտքերը» վերնագիրը. նա ունի մի քանի յօդուածներ «Դրօշակում», մի երկուսը գրուած Ս. Զաւարեանի հետ միասին, որ չեն մտել այս ժողովածուի մէջ։ Բոլոր գրուածքներն էլ մենք օգտագործել ենք։

Ռ. Միքայէլեանն ունի իր յատուկ գրելու ձևը։ Նրա լեզուն հակիրճ է և կտրուկ։ Նա գրում է ցասումով և արիւնով, դրա համար էլ մարդ ստիպուած կարդում է նրան, կարդում է և խորապէս ազդւում։ «Եթէ ուզում ես, որ քեզ կարդան, գրիր քո սեփական արիւնով»։ Ճշմարտութիւն է այս։ Ռիսսափոր Միքայէլեանի բոլոր գրուածների մէջ կայ անկեղծութիւն, խորին համոզմունք, երկաթեայ տրամաբանութիւն, որ ընթերցողին անմիջապէս գերում է, մտքերը դարձնում համոզիչ, վճռական ազդեցութիւնն անտարակուսելի։

Ոչ միայն նախադասութիւնը, այս կամ այն միտքը, այլ և իւրաքանչիւր խօսքը նա առանձին խնամքով էր գրի առնում, երկար կանգ առնում ամեն մի մտքի և նրա արտայայտութեան վրայ, անգամ կտոր-կտոր կարդում իր ընկերների ներկայութեամբ։ Այսպէս է նա գրել «Ամբոխային տրամաբանութիւնը»։ Ռ. Միքայէլեանի նպատակ էր իր իւրաքանչիւր միտքը, իւրաքանչիւր դրութիւնը տալ անառարկելի ձևի մէջ։ Եւ նա էապէս հասել է իր նպատակին։

Իսկ եթէ այս բոլորի վրայ աւելացնենք եւ մի շարք այլ բարեմասնութիւններ, այն ժամանակ նրա նշանակու-

թիւնն աւելի ևս կը բարձրանայ, նրա դէմքն աւելի ևս կը պարզուի։ Ա՛յն, որ նա խորը ծանօթութիւն և լայն ըմբռնում ունէր հասարակական երևոյթների և շարժումների մասին, գիտէր մեր անցեալ կեանքը, գիտէր մեր ժողովրդի հոգեբանութիւնը, մեր իրականութեան և միջավայրի յատուկ պայմանները, կիրառում է գիտական մեթոդ ևայլն, ևայլն։

Ինչպէս գործը և խօսքը, այնպէս էլ կեանքը և թէորիան, մի անբաժան, ներդաշնակ ամբողջութիւն են կազմում նրա համար։ Բայց լինելով կեանքի, կենդանի գործի մարդ, Ռ. Միքայէլեանը կեանքն էր համարում ղեկավար ցեսակետ։ Նա միշտ էլ կեանքի ձայնին էր ունկընդրում, լայն և յարաճուն կեանքից քաղում իր իմաստութիւնը, կազմում և սրբագրում իր վարդապետութիւնը, առանց արհամարելու, ի հարկէ, հասարակագիտական տեսութիւնները։ Զոր վերացականութեան, անբովանդակ և անկենդան ֆորմուլների մարդ չէր նա։ Այս խիստ արժէքաւոր գիծը նա հաղորդել է իր ամբողջ կուսակցութեանը։ Նրա կուսակցութեան ամենագրաւիչ կողմը հէնց այն է, որ գերազանցապէս կենսունակ է, որ չի ղեկավարւում այս կամ այն դօգմայով, անկենդան ֆորմուլով, այլ դնում է մշտապէս յարաճուն կեանքի և իրականութեան հետ, ունկընդրում նրա անմիջական թելադրանքին և այժմէական պահանջների ձայնին։

Հէնց այս թանկագին գիծն էլ գոյն է տալիս նրա աշխարհայեցողութեան։ Ժողովուրդների յարաբերութիւնները, հասարակական երևոյթները կազմում են մի բարդ հիւսուածք, արդիւնք բազմապիսի տարրերի, հետևապէս չի կարելի այս բոլորը տալ, վերածել մի պարզ ֆորմուլի մէջ։ Ամեն մի պատմական և հասարակական երևոյթի լուսաբանութեան մօտենալիս, նա վերցնում է իրական կեանքն իր ամբողջութեան մէջ, մանրազնին վերլուծման ենթարկում և ճշտում այդ բազմազան գործօններից իւրաքանչիւրի յատուկ դերը—երկրի կուլտուրայի, ազգային և պատմական առանձնայատկութիւնների, միջավայրի, կրօնի, անտեսական շահերի և այլն։ Այսպիսի գիտական մեթոդի արդասիք են «Ամբոխային տրամաբանութիւն», «Պատմական չարիք» և «հայ-ըրդական յարաբերութիւնները» գրուածքները։ Հասարա-

կական կեանքը այնքան բարդ է, որ անկարելի է մի հատիկ գործօնով տալ այն ճշմարտապատում կերպով։ Թերի, միակողմի և ոչ-գիտական է այն պատմահայեցողութիւնը, որ կեանքի մի տարրը, մի կողմն է միայն ի նկատի ունենում։

Ինչպէս տեսնում էք, Քիստափոր Միքայէլեանը ռէալիստ է, պատմական ռէալիզմի ներկայացուցիչ, մի պատմահայեցողութեան, որ ընդունում և ճանաչում է բազմապիսի տարրերի դերը և փոխ-ազդեցութիւնը պատմական-հասարակական երևոյթների մէջ։ Լինելով ռէալիստ, նա խորին գիտակցութեամբ աչք չի գոցում և ոչ մի գործօնի առաջ. նա այն մարդկանցից էր, որ անսերկիւղ նայում են մերկ, թէկուզ երբեմն անողոք իրականութեան աչքի մէջ։ Քր. Միքայէլեանի ընդհանուր աշխարհայեցողութեան մի յատկորոշ գիծն էլ կազմում է ներգործունութիւնը։ Այդ բղխում է նրա խառնուածքից, նրա կեանքից և գործունէութիւնից։ Նրա ամբողջ կեանքը մի գերազանցապէս ներդործոն աշխատանք էր։

Ոչ ոք այնպէս բարձր չէր գնահատում գիտակից տարրի, գիտակից և կազմակերպված ոյժերի մասնակցութիւնը, հասարակական և քաղաքական շարժումների մէջ, ինչպէս նա։ Շահեր և իդէալներ ունենալը դեռևս բաւական չէ։ Պէտք է միաժամանակ պայծառ գիտակցութիւն ունենալ սեփական ոյժերի մասին։ Միշտ էլ ժողովրդի մէջ որոշ անհատներ, գիտակից և իդէալներ ունեցող փոքրամասնութիւնն է բարձրանում կեանքի բեմի վրայ, ակտիւ դեր խաղում, տոն տալիս, կեանքում գիտակցական պայքար մղում իր իդէալների իրականացման համար, իր յետևից քարշ տալով տարերային, անգիտակցական կամ պակաս գիտակցական տարրերին։ Նման անհատները չեն սպասում, որ միջավայրը միանգամայն հասունանայ իրենց դաւանած գաղափարների համար։ «Եթէ մարդկային անցեալի նախակարապետները իրենց գաղափարները առաջ մղելու համար սպասէին, որ նախապէս ամեն ոյժ իրենց հետ համաձայն էր, մեր քաղաքակրթութիւնը դեռևս կը լինէր քարէ շրջանում, և մեզ մնում է մտաբերել այն բոլոր խաչերը, խարոյկները, կախաղանները, գիլիոտինները, բանտերը, մի խօսքով, արեան ու ան-

համար տանջանքների այն հսկայական հնոցները, որոնց միջից անցել են յեղափոխիչ գաղափարները»։ Այսպէս է անա մտածում Քրիստափոր Միքայէլեանը, և ուրիշ կերպ էլ չէր կարող մտածել մի այդպիսի մարդ։ «Ուրիշ հասարակական պայմաններում այս կամ այն ընթացքը, որին հետևում են մի քանի, բայց միշտ աւելի եռանդուն մարդիկ, դառնում է ընդհանուր կարգ, ընդհանուր սովորութիւն՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ուրիշներն էլ ընտելանում են նոյն ընթացքին»։

Նրա աշխարհայեցողութեան մէջ էական տեղ է բռնում նաև բարոյական, արդարութեան սկզբունքը։—Հասարակական հարցերի և երևոյթների սահմանում նոյնքան մեծ, եթէ ոչ աւելի, արժէք և նշանակութիւն ունի արդարութիւնը, որքան ճշմարտութիւնը։ Եւ Քրիստափորին մեծապէս հետաքրքրում է ոչ միայն ճշմարտութիւնը, այլ և արդարութիւնը։ Նա ինքը լինելով բարոյական տիպ, բարոյական մարդուն մեծ և նշանակալից դեր է վերագրում հասարակական կեանքի մէջ։ Նրա համոզմունքով, յեղափոխութիւնը միայն բարոյական, մաքուր և ազնիւ մարդկանց սպասարէզ է։ «Շարլատան»-ը չի կարող լինել լաւ յեղափոխական, այլ միմիայն բարոյական մարդը, ասում է նա։ Ընդհանուր լքման օրերին, ամենածանր բոպէներին միայն այդպիսի գործիչներն են մնում սպասարիզի վրայ, գործի գլուխ, անկուն և անդաւաճան։ Շարլատանը խկոյն ծլկում, անհետանում է։

II

Բայց ո՞րն է այն իդէալը, որ դրված է նրա գրուածներում և որին նա ձգտել է իր ամբողջ կեանքի ընթացքում. ո՞րն է այն լաւագոյն և արդար հասարակարգը, որ դրված էր նրա եռուն և ստեղծագործ գործունէութեան հիմքում և գոյն տալիս նրա աշխարհայեցողութեան։

Քր. Միքայէլեանը ռամկավարական էր, այս բառի ամենաազնիւ և լայն իմաստով։

Ինչպէս գիտենք, դեռ ևս ուսանողութեան ժամանակ, Մոսկվայում, նա համոզված ընկերվարական էր: Անգամ դրանից տարիներ առաջ, երբ նա սովորում էր Թիֆլիսի Ուսուցչական Ինստիտուտում, նրա հոգու մէջ ընկերվարական աշխարհայեցողութիւնն իր խոր արմատներն էր ձգել և, այնտեղ պարարտ հող գտնելով, արագ աճում էր: Ինքը կեանքը, հասարակական խոր ապրումները, երկար տարիների ծանր խոհերը սոցիալական մեծ հարցի և նրա լուծման մասին, ինչպէս և հասարակական գիտութիւնների խոր ուսումնասիրութիւնը նրան հաստատապէս բերել էին այդ եզրակացութեան, այդ հիմնական լուծման:

Նրա աշխարհայեցողութեան հիմքում դրված է աշխատանքի բարձր սկզբունքը: «Արդարութեան ամենագլխաւոր պահանջն է, որ ամեն մարդ իր քրտինքով պիտի աշխատէ կերած հացը, որ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգուտ: Դէմոկրատիայի յաղթութիւնն այնպիսի հսկայական քայլերով առաջ է գնում, որ շատ ժամանակ չանցած հասարակութեան ղեկավարող տարրը զանազան առանձնաշնորհումների տեղ դնելու է աշխատանքը իբրև ընդհանուրի բարգաւաճման միակ միջոց»: Այս խոսքերը Քր. Միքայէլեանը գրել է դեռ ևս 1892 թ-ին, իր անբաժան ընկեր Սիմէոն Զաւարեանի հետ միասին: Նա հաւատում է, որ «յաղթանակելու է աշխատանքի սկզբունքը, ընկերական կարգը»: «Հասարակական կեանքի ալիքը, ասում է նա նոյն տեղում, պակասեցնելով նիւթական անհաւասարութեան հետ անխախտ կապված ճնշումը՝ տանում է մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէպի ընկերական հաստատութիւնները»:

Ժողովուրդները, ամբողջ մարդկութիւնը մի մեծ ընտանիք է, մի ներդաշնակ, միաձոյլ դաշնակցութիւն՝ խարսխված այդ ազգերի հաւասարութեան և եղբայրութեան, հաւասար ու արդար աշխատանքի և հաւասար վայելման ու բաշխման սկզբունքների վրայ: Կարճ, նրա ուզածն է «սոցիալիստական կազմակերպութիւն՝ համայնական սկզբունքի վրայ:» Ռուս սոցիոլոգիական դպրոցի, նարոդնիկական ուղղութեան և մեր հայկական կեանքի ու միջավայրի խոր ուսումնասիրութեան արդիւնք է այդ:

Ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ իրաւունք և տեղ ունի արևի տակ, և ոչ ոք արդար և բանական հիմք չունի խլելու նրանից այդ իրաւունքը և տեղը: Ամեն մի ազգ իրաւունք և տեղ ունենալով արևի տակ, պէտք է լինի ինքնավար, միանգամայն ազատ իր ներքին գործերի մէջ: Դա է բնական, արդար և անկաշկանդ կարգը, ուր ամեն մի ժողովուրդ ազատօրէն ստեղծագործելու, կերտելու է արժէքներ՝ իր և համայն մարդկութեան համար: Քրիստափոր Միքայէլեանի խորին համոզմունքով «աշխատաւոր դասերն իրենց բնական և բազմակողմանի զարգացման համար նոյնքան կարիք ունեն ազգային անկախութեան, որքան ընդհանուր ձայնատուութեան, կազմակերպութիւնների, խօսքի և մամուլի ազատութեան, և այլն:» Նա չի տեսնում որևէ հակասութիւն, որևէ հակամարտութիւն ազգայնութեան և միջազգայնութեան, ինչպէս սոցիալիզմի և անհատականութեան մէջ: Նա ինքը լինելով մի հայրենասէր, միաժամանակ մաքուր այլասիրութեան մի տիպար էր: Նա մարդ էր, մի ազգի և միաժամանակ ամբողջ մարդկութեան մի անդամ: «Լինելով հայեր, գործելով հայերի մէջ, մենք մնում ենք մարդիկ և չենք կարող ուրիշներին պակասը ցանկանալ, քան ուզում ենք մեզ համար:» Այսպէս է տրամաբանում հայ մարդը: Ինչպէս ամեն մի անհատ ազգի մէջ, այնպէս էլ իւրաքանչիւր ազգ-անհատականութիւն համայն մարդկութեան մէջ իրաւունք ունի ազատօրէն զարգանալու՝ ներդաշնակ և բազմակողմանի:

Այդ է ցոյց տալիս ազգերի պատմութեան ընթացքը, ազգերի յարաճուն զարգացումը: Այժմ նրա այդ հայեացքը լիապէս ճշտւում է կեանքի մէջ: Պատմական ընթացքը և կեանքը անկասկածելի կերպով հաստատում են, որ մանր ազգերը ոչ միայն չեն վերանում, ոչ միայն չեն զրկւում իրենց՝ արևի տակ գրաւած տեղից և իրաւունքից, այլ աւելի բազմանում են, հետզհետէ նոր ու նոր ինքնավար ու անկախ ազգութիւններ երևում կեանքի բեմի վրայ և իրենց տեղն ու իրաւունքն աւելի ևս հաստատուն դարձնում: Ահա Բալկանեան մանր ազգերը, ահա Անգլիայի օրինակը—Իրլան-

դիա, Շոտլանդիա, և այլն։ Ժողովուրդների, ազգերի զարգացումը գնում է այդ ընթացքով։ Չը տեսնել այդ, նշանակում է աչք փակել ազգերի պատմութեան և իրականութեան առաջ։

Այսօրուայ համաշխարհային պատերազմն աւելի ցայտուն կերպով երևան բերաւ այս հարցը — ազգային հարցը։ Այժմեանից մի բան պարզ է, այն, որ վերջնական հաշուեյարդարումի, նոր երկրասահմանների դծման հիմքում դրուած է լինելու ազգային սկզբունքը։

* * *

Այդ նրա հեռաւոր նպատակն էր, նրա գերագոյն իդէալը, որին պէտք է ձգտեն բոլոր ժողովուրդները, բոլոր ռամկավարական խմբակցութիւններն անխտիր։

Բայց Քրիստափոր Միքայէլեանն ունէր նաև իր մօտաւոր նպատակը, իր այսօրուայ գործը։ Տաճկահայի դատն էր այդ, որ կազմում էր նրա սրբութիւն-սրբոցը, նրա կեանքի մեծ խորհուրդը։ Եւ նա իր գեղեցիկ ու հարուստ կեանքը նուիրաբերում է այդ դատի, տաճկահայի ազատագրութեան նուիրական գործին։ Վերացնել այդ կնճիռը, նշանակում է լուծել Մեծ Հարցի հանգոյցը, նշանակում է կատարել համամարդկային մի գործ։ «Մեր կռիւը տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլև եւրոպական քաղաքակրթութեան ու մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան և կուլտուրայի»։ Այսպէս էր նա նայում հարցի վրայ։ Այս տողերը նա գրել է դեռ ևս այն օրերին, երբ նա անցաւ հայ դատի գլուխը և դրաւ իր կազմակերպութեան հիմքը, 1890 թուին։

Բայց ո՞րն էր նրա ցանկութիւնը, ի՞նչ էր նա կամենում համայն Տաճկաստանի համար։ Նրա դիրքը շատ պարզ էր, նրա վերաբերումը՝ բացորոշ։ Նա «չի ձգտում ոչ հայ թագաւորութեան վերականգնման, ոչ թեկուզ 100 մարդուց միայն բաղկացած որև է ազգութեան սպառնող գերիշխանութեան, ոչ էլ անպատճառ ձեր պետութիւնից անջատելուն»։ Այսպէս է պատասխանում Քր. Միքայէլեանն այն երիտասարդ

թիւրքերին, որ միութեան կոչ էին անում և համագործակցութեան հրաւիրում։ Նրա պահանջը շատ համեստ էր, միանգամայն բանական և արդար։ Նա ցանկանում էր «համայն Տաճկաստանի համար մի կազմակերպութիւն, որ անշուշտ ընդունակ է միացնել բոլորին։ Դա ֆեդերատիւ (դաշնակցական) ռամկավարական կազմակերպութիւնն է, որի համաձայն տաճկահպատակ բոլոր ժողովուրդները կազմում են մի անխախտ ամբողջութիւն, բայց իւրաքանչիւրը իր ներքին, տեղական ինքնավարութեամբ»։ Եւ նա յորդորում է «պարզել բոլորի առաջ Օտտօմանեան Դաշնակցութեան եղբայրական դրօշակը» և համախմբել ընդհանուր գործի շուրջը բոլոր տաճկահպատակ ժողովուրդների առաջադէմ և ազնիւ տարրերը։

Նա իր այս բոլոր պահանջների մէջ ղեկավարւում է տեղի և ժամանակի սկզբունքով, ի նկատի ունենում երկրի զարգացման աստիճանը, առանձնայատկութիւնները, միջավայրի պայմանները և այլն։ Արդէն մէկից աւելի անգամներ ասել ենք, որ Քր. Միքայէլեանը կեանքի և գործի մարդ էր, և ոչ թէ անհող վերացականութեան, չոր թէօրիայի երկրպագու։ Այս կամ այն նոր կազմակերպութիւնը մտցնելիս պէտք է անպայման հիմք ունենալ երկրի բոլոր առանձնայատուկ պայմանները։ Բոլոր երկիրները և ժողովուրդները կանգնած չեն միևնոյն աստիճանի վրայ, չունեն յար և նման պայմաններ, նրանց զարգացումը չի ընթանում ճիշտ միևնոյն ուղղութեամբ։ «Ինչպէս ներկայիս մէջ կարող ենք գտնել անցեալի բոլոր գլխաւոր և ապրելու արժանի կողմերը, նոյնպէս կարողենք ասել, որ ապագայ կազմակերպութեան բոլոր տարրերը կարող են զարգանալ միայն ներկայից։ Հետեւաբար, այս կամ այն հասարակական հաստատութիւններն իրականացնելու համար բաւական չէ ունենալ միայն կամք, նոյն իսկ կարողութիւն՝ ձևելու հասարակական կազմակերպութիւնը այս կամ այն մոդելից։ Դրա համար անհրաժեշտ է, իբրև հիմք, վերցնել ժամանակին և տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաև ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան»։

Այս մեծ քաղուածքը մենք անում ենք Քրիստափոր-Սիմէօնի Մանիֆէստից, ծրագիր-գրուածքից։ Այս տողերի մէջ կայ մի սոցիոլոգիական ճշմարտութիւն, որ մեր օրերում ճանաչւում է լաւագոյն և անուանի սոցիոլոգների և պատմաբանների կողմից։

Ահա այս հասարակագիտական ճշմարտութիւնը հիմք և ելակէտ ունենալով, նա Տաճկաստանի համար այլ բան չի առաջադրում, քան այն, ինչ տեղական պայմաններից, ըստ յարաբերութիւնից են բնական ձևով բղխում։ Նա միանգամայն զերծ է արևմտեան դօկտրինեօրութիւնից։ «Այն երկրում, ուր գերիշխում է երկրագործութիւնը և նահապետական կուլտուրան, խօսք չի կարող լինել Արևմտեան Եւրոպայի սոցիալիզմի մասին, ուր տիրում են որոշ սոցիալական պայմաններ։ Տնտեսական խնդիրներ շօշափելիս պիտի զեկավարւել երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով. մանաւանդ որ մեր ազգային գիտակցութեան մէջ պահպանուել են այնպիսի հողատիրական ձևեր, որ ուրիշ նպաստաւոր պայմաններում կըլինէին բարօրութեան գլխաւոր գրաւականը, այն, որ հողը պատկանում է մշակողին։ Իսկ հողային հարցը մեր ամենագլխաւոր հարցն է»։

Ահա իր այս հիմնական հասարակագիտական տեսակէտից ելնելով, նա պահանջում է «ոյժ տալ գիւղացու համայնական սկզբունքներին, զարգացնել այն ընկերական հիմնարկութիւններն ու ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրայ, տեղական ու պատմական հանգամանքների ազդեցութեան տակ, լայնացնել այդ հիմնարկութիւնների սահմանը գիւղից, թաղից սկսած մինչև գաւառը, մինչև ամբողջ տէրութիւնը և այսպիսով ապահովել միանգամայն համայնքի ամեն մի անդամին՝ բնութեան և ընթացիկ կեանքի պատահական հարուածներից»։

Ահա ինչպիսի հասարական կազմ է ցանկանում նա տաճկահայերի, համայն մարդկութեան, բոլոր ազգերի համար։ Դա մի ցնորական ցանկութիւն, մի ուտոպիա չէ, անհող և միայն վերացական-թէորիական կառուցուածքի արգասիք, այլ կեանքի անմիջական թելադրութիւն։ Ինքն ազ-

գերի պատմութիւնը, հասարակական հիմնարկութիւնների զարգացման ընթացքն է այդ ցուցանանում։

III

Մեզ համար արդէն պարզ է Քր. Միքայէլեանի հասարակական իդէալը, նրա մօտաւոր եւ հեռաւոր նպատակը։

Այժմ հարցնենք. ինչ նպատակայարմար միջոցներ էր նա առաջադրում իր այդ նպատակի իրագործման համար։ Մի ինքնըստինքեան հետաքրքրական, նրա աշխարհայեացքի բնորոշման տեսակէտից առաջնակարգ հարց։

Այնպիսի նկարագրի և ըմբռնումների տէր մարդը, ինչպէս է Քրիստափոր Միքայէլեանը, չէր կարող յամենայն դէպս համակիր լինել խաղաղ, կուլտուրական միջոցներին։ Այո, կան և եղել են, մեր իրականութեան մէջ այդպիսի մտածողներ, որոնք կամեցել են կեանքը բարեփոխել, ազատութիւն ձեռք բերել լոկ «քաղաքակրթական խաղաղ պատերազմով»։ Բայց այդ ուղղութիւնը, և այդ ուղղութեան մտածողները, «միջին ուղիների սիրահարները» որևէ գրաւչութիւն չունէին և չէին կարող ունենալ Քրիստափորի նըման մարդու համար։ Նրա ըմբռնումներին, հասարագիտական աշխարհայեցութեանը միանգամայն չէր համապատասխանում այն միամիտ կարծիքը, թէ մի ժողովուրդ կարող է ազատագրուել խաղաղ ճանապարհով, «միայն իր կուլտուրական հակումների շնորհիւ», այն էլ այնպիսի մթնոլորտում, ինչպիսին է տաճկական իրականութիւնը։ Նման մի հատիկ օրինակ անգամ չկայ ազգերի պատմութեան մէջ. չը կայ մի ժողովուրդ, որ իր անկախութիւնը ձեռք բերած լինի լոկ խաղաղ, կուլտուրական միջոցներով։ Իսկ պատմութիւնը Քր. Միքայէլեանի համար իմաստութեան մի աղբիւր է, ամենալաւ դասատուն։

Նա, միւս կողմից, համաձայն չէ բոլոր նրանց հետ, որոնք ուզում են միայն քաղաքագիտութեան միջոցով, դիպլոմատիքական ճանապարհով հասնել իրենց նպատակին, հայերի ազատագրման։ Ի՞նչու։ Որովհետև բացառապէս դիպլոմատիան ոչինչ չի անիլ դրդուած մարդասիրութիւնից։ Մեր

նիւթապաշտ դարում դիպլոմատները զեկավարում են սեփական շահերով և աւելի ուժեղի իրաւունքներով»։

Դիպլոմատիայի այսպիսի գնահատումը նա տուել է դեռևս 1890 թուին։ Բայց Քրիստափորը բացարձակապէս անարժէք չի համարում դիպլոմատիայի գերը։ Նա շատ լաւ գիտէր, թէ դիպլոմատիան երբ և ինչ դէպքում կարող է մեր դատին օգտակար լինել։ Եւրոպական պրօպագանդը միայն այն չափով արժէք ունէր, ինչ չափով ստեղծելու էր նպաստաւոր, համակիր հասարակական կարծիք դէպի տաճկահայ դատը։ Նա գտնում էր առհասարակ տաճկահայերի կողմից միանգամայն անօգուտ, մինչև անգամ վտանգաւոր իրենց յոյսը դնել օտարի վրայ։

Ցետ մղելով այդ աննպատակայարմար և անպտուղ միջոցները, նա գնում է կռուի միջոցը. յեղափոխութիւնը։ Այս է միակ ստեղծագործ, միակ յուսալի և հուժկու միջոցը, այն միակ ուղին, որով գնացել են բոլոր ազգերը։

Վաղուց արդէն հայկական կեանքը եկել, կանգ էր առել մի խոշոր դիլեմայի առաջ—«կամ անպայման ընտրելու՝ որպէս մի ամբողջութիւն, մի ազգութիւն, կամ դիմադրութիւն՝ կեանք, պատիւ, ստացուածք, տուն, հայրենիք, իրաւունք բռնարարող ոյժի, տաճիկ բռնակալութեան դէմ»։ Այսպէս էր զրութիւնը և նրա առաջ գրած խնդիրը այդպիսի սուր ձևակերպում է ստանում։ Մի ժողովրդի գոյութեանը սպառնացող այսպիսի վտանգի առաջ մի անտանելի անմտութիւն էր, անկասկած, մոռանել ընդհանուր մարդկութեան օգուտի, համամարդկային քաղաքակրթութեան մասին, և դրանում տեսնել հայի դատի լուծման միջոցը։ Այդպիսի երկսային դառն հանգամանքների մէջ տառապող և հարատևարուող մի ժողովուրդ պէտք է ընտրէ այն բնական և յուսատու, միաժամանակ պատուաբեր ուղին, որ «զոհերի հետ միասին խոստանում է նաև որևէ ապագայ։ Մի վեհ, մի փայլուն, մի սրբազան դիպք է այդ՝ հաւանական յաջողութեամբ»։ Իսկ գործի հաւանական յաջողութիւնը կարելի ապահովված համարել, եթէ կան հետևեալ երկու անհրաժեշտ պայմանները.—առաջին, «եթէ ժողովուրդը, որի շահերի համար մղում է կռիւը, հասկանում է այդ կռիւի անհրաժեշտ լինելը և մասնակցում է այդ կռուին թէ ուղղակի և թէ անուղղակի կերպով, գոնէ ի դէմս իր ամենալաւ ներկայացուցիչների, և երկրորդ, եթէ կռուի համար ընտրած են այնպիսի նպատակայարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխանում են ներկայ իրականութեան և պատմական բոպէի պահանջած պայմաններին»։

Այս տողերը գրած են 1891 թուին։ Եւ նա գտնում է, որ առաջին պայմանը կայ մեզանում և պէտք է ընտրել կռուի նպատակայարմար միջոցներ և ձևեր։ Աշխարհայեացքի տեսակէտից կարևոր է առաջին պահանջը։ Ի՞նչու։—Նրա տեսակէտով, ոչ մի հասարակական շարժում, աւելի ևս յեղափոխական, «չի կարող յարատևել և մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերի մէջ։ Այնպիսի մի մեծ խնդիր, ինչպիսին է հալածուող մի ժողովրդի ազատագրումը ուժեղ բռնակալի ճիրաններից, չէ կարող աջողութեամբ պրսակուել, եթէ նա սահմանափակուի ժողովրդից կտրուած որևէ հասարակական դասակարգով։ Ցետոյ, ոչ մի ազատութիւն դեռ չի կարող ունենալ ժողովրդի համար և չի կարող հեռանաբար և պահպանել, եթէ ինքը ժողովուրդը չի դիտակցում ազատութեան պահանջը և չի մասնակցում նրա անունով յայտարարուած կռուին. օդից ընկած ազատութիւնից՝ անգիտակից ժողովուրդը չի օգտուում և հեշտութեամբ կորցնում է այն առաջին պատահած դէպքում։ Վերջապէս, թիւրք կառավարութեան կամ եւրոպական շահերին ճնշելու գործը միաք է ստանում այն ժամանակ միայն, երբ նայում են յեղափոխականների վրայ իբրև ժողովրդական արտայայտիչների վրայ»։

Բայց դարձեալ վերադառնանք այն հարցին, թէ ինչու, ինչ նկատումներով և հիմունքներով կռուի, յեղափոխութեան միջոցն է նախընտրում։

Նախ և առաջ ազգերի պատմութեան դասն է այդ։ Նա այդ խմբագրութիւնը քաղել է պատմութիւնից, ամենից առաջ և ամենից աւելի թիւրքա-հպատակ քրիստոնեայ ազգերի, Բալկանեան ժողովուրդների ազատագրումների պատմութիւնից։ Բալկանեան ազգերից և ոչ մէկի ազատագրումը

կամ անկախութիւնը անարիւն նուաճման արդիւնք չէ: Նը-
բանցից իւրաքանչիւրը երկար տարիներ անհաւասար կռիւ
է մղել, յաճախ անասելի կերպով պարտուել, ջարդ կրել, ար-
իւնաքամ եղել, բայց երբէք չի եկել այն եզրակացութեան,
թէ պէտք է այլ ուղի, գործունէութեան այլ ճանապարհ ը-
ստրել: Նրանք միշտ էլ հաւատարիմ են մնացել կռիւ, յեղա-
փոխութեան փրկարար ուղիին, և այդ ձեով ու այդ միջոցով
ձեռք բերել իրենց ազատագրումը:

Առանց արեան, առանց կռիւ չկայ և չի կարող լինել
ազատութիւն: «Հայերս ոչինչ չը ստացանք: Այնտեղ ապու-
ը ուտում էին երկաթէ շերեփներով, իսկ մենք ունէինք մի-
այն բղրէ շերեփ»: Սրանք մեծ հայի, հայ մեծ պատգամաւո-
ի խօսքեր են, Խրիմեան Հայրիկի, որը վերադառնում էր
Բեռլինի պատմական Վեհաժողովից Ո՞րն է այդ նշանաւոր
հայի այդ պատմական խօսքի էական իմաստը—կռուի անի-
հրաժեշտութիւնը: Ով չի կռուել, նա չի կարող ազատութիւն
ստանալ: Այս էր Բեռլինի Վեհաճողովի անուղղակի պատաս-
խանը: Ով կռուել էր և «երկաթէ շերեփով» էր եկել Բեռլին,
նա ստացաւ իր անկախութիւնը: Իսկ հայը չէր կռուել և մի-
այն աղերսել էր, ձեռքին չունէր անհրաժեշտ՝ ոյժը, «երկա-
թէ շերեփը»:

Յետոյ, «չկայ այս աշխարհում աւելի կրթիչ օրինակ,
քան գործերի կենդանի օրինակն է. չկայ աշխարհում ոչ մի
լսարան, ուր կարելի լինէր ժողովել այնքան ունկնդիրներ,
որքան ունենում է գործի ասպարէզը նեռուած յեղափոխական
քարոզիչը. չկայ ոչ մի ձայն աշխարհումս աւելի հեռու, աւե-
լի մեծ տարածութեան վրայ լսող, քան գործերի գոռումբ-
գոչումն է. չկայ ոչ մի լեզու, որով կարելի լինէր խօսել ամ-
բողջ մարդկութեան առաջ հասկանալի խօսքերով, բացի
գործերի լեզուից»: «Ո՞վ արդեօք, ինչ մարդ, ինչ քարոզիչ
կամ քարոզներ կարող էին Կ.-Պոլսից մինչև Վան, Ռուսաս-
տանից մինչև Ամերիկա ցնցել հայութեան՝ բոլորի սրտին
միևնոյն զարկը հաղորդելով, բոլորի առջև պարզ ամփոփե-
լով մեր ընդհանուր ազգային իղձերը, քան այդ անում էին
յեղափոխական ձեռնարկները: Ո՞ր գրողն արդեօք, ո՞ր լեզ-
ուագէտը, ո՞ր հարուստը, ո՞ր հռետորը կարող էր հայկական

պահանջների մասին այնքան հրատարակութիւնների մէջ
այնքան լեզուներով, այնքան գրել, այնքան տպագրել, այն-
քան սրտեր ու մտքեր յուզել, որքան գրել, տպագրել, ըզ-
գալ և մտածել էր տալիս հայ ժողովրդի ծանր, աննորմալ,
դժոխային կացութեան թարգմանը—յեղափոխական բողոքը:
Ո՞ւր են վերջապէս հրոսակային կամ տերրորական, զինա-
տար կամ պարտիզանական խմբերի կռիւներից դուրս այն
դահլիճները, այն զօրանոցները, ուր հայը պիտի վարժւէր ար-
եան գործի մէջ և յեղափոխական բանակներ պատրաստէր
կամ կազմակերպէր»:

Այսպէս, միակ ճշմարիտ ուղին կռիւ, արեան գործի ու-
ղին է:

Այլ ուղիներ և միջոցներ չկան: Հայ դատի փրկութիւ-
նը պիտի որոնել միայն կռիւ, յարատեւ կռիւ մէջ: «Պահպա-
նենք, շարունակենք կռիւը, որպէսզի լայնանայ, ընդարձ-
ակւի, և ընդարձակւելով՝ յարատեւի—ահա դէպի մեր նը-
պատակը տանող միակ ճանապարհը, որ պատճառների և
հետևանքների կապակցութեամբ ունի պատմութեան մէջ
հաստատուած օրէնքի ոյժ: Զը շեղուենք այդ միակ ճանա-
պարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկ-
ներով»...

Ահա Քրիստափոր Միքայէլեանի պատգամը, որ միան-
գամայն գոյն է տալիս նրա ընդհանուր աշխարհայեցողու-
թեանը:

IV.

Այդ ուղին, սրբազան կռիւ ուղին մի այլ տեսակէտից
ևս միակ նպատակայարմարն է:

Վերոյիշեալ բոլոր առաւելութիւններից զատ, նրա հետ
կապուած է նաև մի այլ մեծ առաքելու-
թիւն: Յեղափոխութիւնը մի բարոյական ոյժ է, իսկ յեղա-
փոխական ուղին՝ մի ժողովրդի, ինչպէս մեր ժողովուրդն է,
բարոյականացման ուղին է: Յեղափոխութիւնը քաղաքական
ազատութեան հետ բերում է նաև բարոյական մաքրութիւն:

Ի՞նչպէս հասկանալ այդ՝ մեր դատի նկատմամբ:

Այստեղ Քրիստափոր Միքայէլեանին զբաղեցնում է, հայկական միջավայրի, աւելի ևս ազգային առանձնայատկութիւնների հարցը, կարճ, մեր ժողովրդի նկարագրի խնդիրը։ Այս հարցի վերլուծմանն է նուիրել նա իր «Պատմական չարիք» աշխատութիւնը։ Իւրաքանչիւր երկիր ունի իր յատուկ, այս կամ այն չափով միւս երկրներից տարբերուող պայմանները, որոնց ազդեցութեան տակ ժողովրդի մէջ զարգանում են որոշ հակումներ՝ երկրի աշխարհագրութիւնը, կլիման, միջազգային դրութիւնը, կառավարութեան ձեւը, օրէնքները, պատմական անցեալն՝ իր դժբախտութիւններով, յիշողութիւններով և փորձերով, գրականութիւն, լեզու, կրօն և այլն։ Հայ ժողովրդի ազգային առանձնայատկութիւնները, նրա նկարագիրն էլ կազմաւորուել է այդ ձեւով, իր միջավայրի, երկրի յատուկ պայմանների տակ։ Ամբողջ երկար դարեր նա կրել է բազմատեսակ հարուածներ, ենթակայ է եղել Թիւրքիայի անարգ և այլասերող ռէժիմին, ստիպուած է եղել հպատակ լինել և յարմարուել... Իսկ այս բոլորը սերնդէ-սերունդ, դարերի ընթացքում իր աւերիչ, թունաւորող ազդեցութիւնն է դրել հայ ժողովրդի օրգանիզմի վրայ, այլանդակել նրա պատկերը, առաջ բերել այս կամ այն չափի բարոյական այլասերում։

Ահա այս է, որ Քրիստափոր Միքայէլեանը անուանում է «պատմական չարիք»։

Մեր ազգային առանձնայատկութիւնների հարցը, այդ «պատմական չարիքը» իր վրայ է դարձրել մեր շատ ակնառոր հրապարակագիրների և բանաստեղծների ուշադրութիւնը՝ Ստեփանոս Նազարեանի, Միքայէլ Նալբանդեանի, Գամառ-Քաթիպայի, Բաֆֆու, Գ. Արծրունու և այլն։

«Հայ հեղինակի պարտականութիւնն է, ասում է Նազարեանը, այսօր ցուցահանել անաչառապէս, թէ հայոց ներկայ դրութիւնը մի պատահական բան չէ, մի անիրաւ ընթացք բաղդի կողմից դէպի Հայկի որդիքը, այլ մի հետևանք նոցա թոյլ և աննշան պատմական կեանքի, նոցա անքաղաքացի կառավարութեան, նոցա կործանիչ անմիաբանութեան, անմիտ, մանաւոր անձնասիրութեան այնպիսի միջոցներում՝ երբ հայրենիքը պահպանելու համար պիտոյ է

լուէին և պապանձուէին առանձնական ախտերը և հայրենիքի պահպանութիւնը պիտոյ է լինէր միակ օրէնստու առաջնորդը և միակ նպատակը իւրաքանչիւր մտաւորի առանձնապէս և ամենեցուն ընդհանրապէս»... «Մեր հայերը ասիական բռնակալութեան տակ ուսել են միմիայն խորամանկութիւն և խարդախութիւն... երբէք մտաբերել չեն դրքա, թէ միաբանութեամբ կարողացած կը լինէին իրենց հասարակաց թշւառութիւնը թեթևացնել։ Այսպէս յառաջացել է մեր մէջ այն առանձնութեան ոգին, այն անսէր բարքը, այն կոպիտ անձնապաշտութիւնը, որ չէ թողնում հայերի մէջ դոյանալու մի ընկերական բան, մի հասարակաօգուտ ձեռնարկութիւն»։

«Հայը ոխերիմ է, մատնիչ է, վրէժխնդիր է այն անարգանքի դէմ, որ նա կրում է մի այլ հայից, ասում Բաֆֆին։ Բայց եթէ նոյն անարգանքը նա ստանում է տաճկից, քիւրդից, մի խօսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհութեամբ համբերում է»։ «Հայն ունի ևս խոշոր պակասութիւններ իր մեծ արժանաւորութիւնների հետ միասին՝ անմիաբանութիւն, անհաշտ ոգի, ոխ, նախանձ», ասում է Գ. Արծրունին։

Նոյնն ասում են նաև միւս նշանաւոր հայ հեղինակները, ինչպէս և շատ եւրոպացիներ։

Հայ ժողովրդի դատի մեծ պաշտպանին շատ պարզ էին այս բոլոր ազգային արատները, «հայի կենտրոնախոյս, կենդանի զգացմունքներով ողբաս, ինքնապաշտ բնաւորներով հարուստ» հոգեկան կազմը։ Նա իր կեանքում, իր երկարամեայ գործունէութեան ընթացքում կրել, ճաշակել է մեր ազգային ախտերի, այդ «պատմական չարիք»-ի պատճառած դառնութիւնները, յաճախ ցաւել է նրա հոգին այդ բոլորի առջև։ Նա խորապէս ցաւել և երկար մտածել է այդ «չարիքի» մասին, որովհետև դա որոշ և պատմական դեր է խաղացել հայ ժողովրդի կրած տառապանքի մէջ։ Այդ ախտերով բռնուած են հայ ժողովրդի բոլոր խաւերն անխտիր։ Բարձրը խաւերը, ինտելիգենտ տարրերը, աւելի ևս այլանդակ կերպարանք ունեն, աւելի վատ հակումներ և բնաւորներ ցուցահանում։

Յատկապէս սրանց վրայ է խիստ յարձակւում Քրիստափոր Միքայէլեանը: Եւ այս աշխատութիւնը, «Պատմական չարիք»-ը գրւած է այն ժամանակ (1901 թ.), երբ մեր մըտաւորականութեան խոշորագոյն մասը հեռացել էր ասպարէզից, ընկել փողի և կարիերայի յետևից, իսկ ուսանողութիւնը՝ դիպլոմների:

Այսպէս, նա շատ լաւ ըմբռնելով և գիտակցելով «պատմական չարիքի» գոյութիւնը և կատարած մեծ դերը, միւս կողմից գիտէր և այն, որ այդ բոլորը որոշ միջավայրի, պատմական ուրոյն մթնոլորդի, դարաւոր ստրկութեան հետևանք է՝ կապւած ժամանակի և տեղի հետ: Ինչպէս դարերի ընթացքում, յատուկ նպաստաւոր պայմանների տակ այդ վատառողջ բնազդները, ազգային ախտերը, «պատմական չարիք»-ը կազմել են, այնպէս էլ ժամանակի ընթացքում, տիրող պայմանների փոփոխութեան հետ, չքանալու են նաև այդ վատ յատկութիւնները:

Այդ է թելադրում նրա սոցիոլոգիական հայեցակէտը, նրա պատմահայեցողութիւնը: Ահա ինչու յեղափոխութիւնը, որ բերում է այդ յատուկ պայմանների փոփոխութիւնը, սրբում, մաքրում է միաժամանակ մի ժողովրդի բարոյական ախտերը, նրա վատառողջ բնազդներն ու հակումները, պայծառացնում նրա ազգային պատկերը: «Չկայ լաւագոյն աւազան մեղ պատմական կեղտերից մաքրւելու համար, քան զոհի և անձնւիրութեան այն ուղին, որի վրայ կանգնած են իրենք, յեղափոխական կուսի բոլոր համակիր տարրերը, ինչպէս և չկայ աւելի դրական միջոց չարիքը իր արմատում խեղդելու համար, քան կարող են լինել ազատ կեանքի նոր, փրկարար պայմանները, այսինքն յեղափոխական կուսի նպատակը»: Ահա ինչ է մտածում Քրիստափոր Միքայէլեանը: Ներկայ պայմաններում այդ բարոյական այլասերման դէմ կռւելու համար նա աւելի նպատակայարմար միջոց, աւելի յաջող դեղատոմս չէ գտնում, քան յեղափոխութեան ուղին, մի ուղի, «որ մի կողմից պահանջում ու վառ է պահում սերնդի մէջ անձնականը հասարակականին ենթարկելու ամենամեծ առաքինութիւնը և, միւս կողմից, ձգտում է մի ապագայի, ուր կարիքը պիտի լինի

այն պակասութիւնների, որոնք անհրաժեշտ են դառնում այժմ իբրև գոյութեան համար նպաստաւոր առաւելութիւններ . . . Այո, յեղափոխական դժւար կռիւն է, որի ընթացքում թշնամու դէմ կուրծքը-կրծքին դիմագրաւող, իր կեանքը հայրենիքին զոհող հայը անձնւիրութեան սուրը կրակով տաքացնում է ժամանակից ետ մնացող սերնդի սիրտը և ժողովրդի ամենաթանկագին այդ մասի մէջ կենդանի պահում ազգային ոգու պայծառ հակումները . . . Այդ կռիւն է, որ պիտի բերէ մարդավայել կեանքի համար պահանջւող այն մթնոլորդը, որի մէջ միայն կարող են ճոխ կերպով ծաղկել ժողովրդի դրական հակումները»...

Քրիստափոր Միքայէլեանը շատ լաւ գիտէր—և այդ բանը ապացուցանող փաստեր է յիշատակում նշանաւոր հասարակագէտներից,—որ խաբէութիւնը և կեղծիքը այլ բան չէն, եթէ՝ բնական հետևանք երկիւղի ու հարստահարութեան, և խաբէութեան բոլոր տեսակները միայն վտանգից պաշտպանւելու մի-մի գործիք են: Նա գիտէր, որ ազատութիւնը ներշնչում է անկեղծութիւն և ուրիշ դրական յատկութիւններ, իսկ ստրկութիւնը և բռնակալութեան բոլոր տեսակները սովորաբար առաջ են բերում անբարոյականացում, բարքերի և ժողովրդի նկարագրի այլանդակում:

Ահա ինչպիսի բարոյական մեծ արժէք ունի յեղափոխութիւնը, ազատագրական կռւի ուղին:

V

Յեղափոխական ուղին որքան փրկարար է, բայց նոյնքան նաև դժւարին է, զոհերի հետ կապւած: Յաղթութիւնը ապահովելու համար, անհրաժեշտ է օգտւել ամեն հնարաւոր միջոցներից, պէտք է խտացնել կուսակցների շարքերը, ոտի հանել և գիտակցութեան բերել բոլոր դժգոհ տարրերը, մի կուռ միութիւն կազմել և այդպէս ծառանալ ընդհանուր թշնամու դէմ՝ տալով նրան վճռական հարւած:

Տաճկահայ դատի պաշտպանը շատ լաւ գիտէր, որ Թիւրքիայում, սուլթանների բռնակալական ըէժիմի տակ, միայն հայերը չէն, որ տառապում են և տանջւում: Հայերի նման կեղեքւում են նոյնպէս միւս ժողովուրդները, աշխատաւոր

քիւրդը, ասորին, յոյնը։ Ինքը Թիւրք ժողովուրդը առանձին նախանձելի վիճակի մէջ չէ։ Թիւրք ժողովրդի լայն մասսաներն ևս իրաւազուրկ են, ծանր հարկերի և տուրքերի տակ ճնշուած. նրանք էլ իրենց վրայ մեծապէս կրում են տաճկական վատառողջ կառավարչական սիստեմի բոլոր աւերմունքները և քայքայիչ ազդեցութիւնները. նրանք էլ մեծապէս հեծում են Թիւրք պաշտօնէութեան առասպելական կամայականութիւնների տակ և այլն։

Եւ Քր. Միքայէլեանը միշտ էլ դիմում էր այդ ժողովուրդներին, նրանց գիտակից ու համեմատաբար մաքուր տարրերին՝ հնչեցնելով ընդհանուր գործի, համերաշխութեան և միութեան հրապուրիչ ձայնը։ Նա անկասկած, ամենից առաջ և ամենից շատ ցանկանում էր Թիւրք ժողովրդական խաւերի համագործակցութիւնը, նրանց միութիւնը՝ յանձին դեմոկրատ և յուսատու տարրերի։ Բայց Քր. Միքայէլեանի և նրա կուսակցութեան ջանքերը այդ ուղղութեամբ շօշափելի արդիւնք չեն տալիս, նրա ձայնը մնում է անպատասխան։ Թիւրք ժողովուրդը շատ էր անդիտակից դէպի իր հասարակական կացութեան վէրքերը, իսկ նրա շահերի գիտակից երիտասարդութիւն գրեթէ չկար, և եթէ կար, աննշան ոյժէր կազմում։

1900 թ-ին Տամատ Մահմուդ փաշան միութեան կոչ է ուղղում հայերին։ Այդ առիթով արտայայտել է Քր։ Միքայէլեանը։ Նրա դիրքը որոշ է և կտրուկ, խիստ ընորոշ նրա ընդհանուր աշխարհայեցողութեան տեսակէտից։

Քր. Միքայէլեանը յետ է մղում այդ կոչը։ Ինչու, Միութեան և համերաշխ գործունէութեան ձայները չէին տուում այն տեղից և այն մարդկանցից, որտեղից և որպիսի մարդկանցից նա էր սպասում։ Դրանք միութեան անկեղծ ձայներ չէին. դա ժողովուրդի ձայնը չէր, ոչ էլ նրա դեմոկրատական փոքրամասնութեան ձայնը, տոգորուած ընդհանուր ազատութեան և հաւասարութեան գաղափարներով։ Այդ վերջապէս, կռիւ չէր՝ ընդդեմ բռնակալութեան առհասարակ։

Ո՞վքեր էին միութեան կոչի հեղինակները.—նրանք «միայն թղթի պրոպագանդով պարապողներին և ոչ թէ գործի պրոպագանդիստներ, նրանք լոկ խօսքի և ոչ թէ կենդանի գործի մարդիկ են»։

Քրիստափոր Միքայէլեանը լինելով գործի և յեղափոխութեան մարդ, միայն յեղափոխական մարդկանց կարողէր ձեռք մեկնել։ Նա առհասարակ ատում էր դատարկ խօսքի մարդկանց, և միայն խօսելու համար միանալ—այդ արդէն նրա գործը չէր, աններդաշնակ միանգամայն նրա հակումներին, նրա խառնուածքին։ Դիտենք արդէն, որ այդ նրա կեանքի և աշխարհայեցողութեան յատկորոշ գծերից է։

Բայց գլխաւորն այն է, որ Քր. Միքայէլեանը հակառակ էր այդ «երիտասարդ» կոչուած Թիւրքերի ամբողջ աշխարհայեցողութեան, նրանց իդէալին և տակտիկային։ Նրանք բոլորը բարձր խաւերից են, արիստոկրատ դասից։ Նրանց մէջ բացակայում էր ամենաէականը—դեմոկրատիզմը։

Դրանք մարդիկ են, որ կամենում են յեղափոխութիւն առաջացնել «ի վերուստ» և ոչ թէ վարից, իսկական ժողովրդի կողմից։ Այդպիսի մտայնութիւնը և նման մտայնութեան ներկայացուցիչները չէին կարող գրաւիչ լինել Քրիստափոր Միքայէլեանի, այդ ազնիւ դէմոկրատի համար։

Եթէ անգամ կատարւի երիտասարդ Թիւրքերի ցանկութիւնը, առաջանայ յեղափոխութիւն ի վերուստ, բարձրաստիճան զինուորականների և ազնուականութեան երիտասարդ ներկայացուցիչների կողմից, այդպիսի յեղափոխութիւնը չի բերելու իր հետ տիրող պետական կարգերի, հասարակական հիմնարկութիւնների արմատական ոչնչացումը առհասարակ բռնակալական ռէժիմի վերացումը։ Այդ յեղափոխութիւնը, այսինքն՝ երիտասարդ Թիւրքերի յաղթանակը, չի բերելու հպատակ ազգերին ազատութիւն, չի ստեղծելու երկրում պետական հաստատուն և արդար կարգ։ Այդպէս մտածում և համոզուած էր Քր. Միքայէլեանը, հէնց այդ պատճառով էլ նա ընդառաջ չը գնաց արած կոչին։ Այդպէս էր նա համոզուած, որովհետև այդ էր ասում ազգերի պատմութիւնը, այդ էր թելադրում իր հասարակագիտական աշխարհայեցողութիւնը՝ մի կողմից և գործնական կեանքը, երիտասարդ Թիւրքերի ամենօրեայ գործը և վերաբերումը՝ միւս կողմից։

Երիտասարդ Թիւրքերը չեն կուում երբէք «տաճկական կեանքի ներքին կաշկանդիչ գործօնների դէմ», որ անդամալոյծ են դարձնում ամեն մի ժողովրդի ստեղծագործական աշխատանքը։ Նրանք չեն ուզում առհասարակ արմատական յեղաշրջման ենթարկել ամբողջ ներքին կեանքը։ Նրանք չեն գտնում և չեն ուզում ճանաչել, որ իրենք աւելի ցածր են, քան եւրոպացիները. որ իրանց պատմութիւնը ցածր է, քան եւրոպականը. նրանք գտնում են, որ Թիւրքիայում չկայ մի թերութիւն, մի չարիք, որ գոյութիւն չունենար քաղաքակիրթ երկրներում։ Վերջապէս, նրանց կարծիքով Թիւրքիայի թշւառութեան և անկման միակ պատճառը ներկայ սուլթանն է, Աբդիւլ-Համիդի անձնաւորութիւնը։

Ահա այդպիսի մտայնութիւն ունեցող մարդկանց շարքերից լսւող միաբանութեան կոչը անարձագանք է թողնում Քր. Միքայէլեանը։ Նա հասկանում էր, որ այդ մարդկանց նպատակն էր միայն խեղդել, լռեցնել հայերի բողոքող ձայնը։ Այդ մարդիկ ընդունակ, և պատրաստ էին անգամ արդարացնել կառավարութեան անլուր ոճրագործութիւնը, հայկական ջարդը։ Նրանք չէին ուզում ճանաչել իրենց պատմական հրէշաւոր յանցանքը» հայերի հանդէպ և «քաղաքացիական համարձակութիւն չունեն թէկուզ արար-աշխարհի առջև և ամեն հանդամանքներում բարձրաձայն կոչելու՝ թէ այդպիսի մի սատանայական կառավարութեան դէմ, ինչպէս տաճկականն է, հայերն իրաւունք ունէին և ունեն ինչ միջոցների էլ ասես դիմելու»։

Երիտ. Թիւրքերը միանգամայն զուրկ են այդ կարևոր «քաղաքացիական զգացմունքից։ Մինչև այժմ Թիւրքերն անընդունակ են եղել մեզ «հաւատ ներշնչել դէպի իրենց բարոյականը, նոյնիսկ այնպիսի փոքրիկ գործերում, ուր մենք միշտ էլ կարող էինք համերաշխաբար ընթանալ»։ Նրանց շարքերում Քր. Միքայէլեանը չի տեսնում համոզւած մարդիկ, անձնուրաց գործիչներ, դեմոկրատ և բարոյական մաքուր բնազդների տէր անձնաւորութիւններ, որոնց հետ միայն կարելի է կապւել յեղափոխական կուի տատասկոտ ճանապարհին։ Եւ նա իրաւունք ունի բացականչելու ցաւով.

«Դրանց հետ միանանք»։

Բայց ինչ են նրանք առաջարկում միութեան համար։

Մենք արդէն գիտենք Քր. Միքայէլեանի իդէալը, նրա ծրագիրը՝ Թիւրքիայի վերաբերմամբ։ Իսկ Երիտասարդ Թիւրքերը Քր. Միքայէլեանի և նրա կուսակցութեան «ֆեդերատիւ ռամկավարական կազմակերպութեան տեղ դնում են Միդհատ-փաշայի սահմանադրութիւնը, ընդհանուր բարենորոգումների խնդիրը, կարծելով՝ թէ դրանով կը բաւարարեն տաճկահպատակ բոլոր ազգերի պահանջների, երկրի բոլոր տարրերի կարիքներին։ Այդ ընդհանուր բարենորոգումների խնդրին արժէք չէր տալիս Քր. Միքայէլեանը։ Ինքը պատմութիւնը ցոյց է տւել բարենորոգումների արժէքը։ Տաճիկ կառավարութեան խոստումները միշտ էլ դադարկ խոստումներ են մնացել, բարենորոգումների փորձերը՝ մեռած խօսքեր, և այդ այն պարզ պատճառով, որ «Տաճկաստանը կուլտուրական կեանքի համար անապատ է, որ ժողովուրդը դեռևս տգէտ է, իսկ տաճկական իշխող բիւրօկրատ-ինտելիգենցիայի և հոգևորականութեան մէջ տիրում է արևելեան սպանիչ մթնոլորդը»։ Ընդհանուր բարենորոգումների «հին երգերը» պիտի թողնել և բռնել յեղափոխութեան փրկարար ուղին։

Այս է ահա ճիշտ ճանապարհը Քր. Միքայէլեանի կարծիքով, որ առաջնորդում է անխտիր դէպի Թիւրքահպատակ ազգերի և Թիւրք ժողովրդի ազատագրումը։

Բայց երիտասարդ Թիւրքերը այդքան հեռու և խորը չեն գնում. նրանց ուզածը էապէս և սկզբունքապէս շատ չնչին բան է, հասարակական մի կարկատան։ Միութեան և համաձայնութեան իրենց կոչերով մի կէտ նպատակի էին նրանք հետապնդում միայն—պահպանել ճակատագրապէս կահավիժող Թիւրքիայի քաղաքական արտաքին դիրքը, վերացնել եւրոպական պետութիւնների միջամտութեան հարցը, առիթները։ Եւ նրանց կոիւը ուղղւած էր գլխաւորապէս Աբդիւլ-Համիդի անձնաւորութեան դէմ, բայց երբէք բռնակալական ռէժիմի առհասարակ։ «Բայց դուք, երիտասարդ Թիւրքերդ, հակառակ էք դրան՝ օտտոմանեան դաշնակցութեան, և մէկ սուլթանին խփելով՝ պաարաստէք մեզ էլ չը խնայել։ Ի՞նչպէս հետևենք ձեզ»...

Ահա Քր. Միքայէլեանի գնահատութիւնը և տեսակէտը։ Այս տեսակէտը նա արծարծել և պաշտպանել է դեռևս 1900 թուին, «Միութիւն Թիւրքերի հետ» գրուածքում։ Եւ երկրի յետագայ ընթացքը ցոյց տուաւ, թէ որքան իրաւացի էր Քր. Միքայէլեանը և տեղին՝ նրա յոռետեսութիւնը։— 1908 թուին տեղի ունեցաւ երիտասարդ-Թիւրքական յեղաշրջումը, սուլթան Աբդիւլ-Համիդ II գահընկեց եղաւ, գահ բարձրացաւ Մահմեդ V և պետութեան գլուխն անցաւ փաստապէս երիտասարդ Թիւրքերի կոմիտէն։ Իսկ այդ բոլորի դիմաց դարձեալ հայկական կոտորած, ազգերի հաւասարութիւնը դարձեալ մնում է սնամէջ խօսք, դարձեալ նոյն պաշտօնէութիւնը, դարձեալ նոյն կարգերը և կամայականութիւնները երկրում... Էապէս ոչինչ չէր փոխուել։ Փոխուել էին միայն իշխողները։ Իսկ նախկին Աբդիւլ Համիդեան վերաբերմունքը դէպի տաճկահպատակ ազգերը, յատկապէս դէպի հայերը և հայկական հարցը, ոչնչով չը փոխուեց։

Եւ Քրիստափոր Միքայէլեանը խորին ցաւով ընդգծում է այն հանգամանքը, որ մինչև այժմ (1900 թ), չի երեւացել գէթ մի փոքրիկ խումբ Թիւրք ինտելիգենտների, որ կարողանար մեզ հաւատ ներշնչել, երաշխաւորութիւն ներկայացնէր՝ անվերապահ, վստահ նրանց միանալու, «յեղափոխականին վայել աւիւնով նրանց շարքերը ամրապնդելու» նպատակով։

VI.

Նոյնքան հիմնաւոր և բազմակողմանի կերպով Քր. Միքայէլեանը մօտենում է հայերի և քիւրդերի յարաբերութեան, հայ-քրդական համերաշխութեան խնդրին։ Այս հարցի վերլուծման մէջ ևս իր ամբողջ փայլով արտայայտուել է գտել նրա բէալիստական պատմահայեցողութիւնը, և նրա խորհրդածութիւնները բարձր գիտական արժէք և նշանակութիւն ունեն։ Այստեղ ևս մի աւելորդ անգամ ցուցահանւում է նրա խորունկ ծանօթութիւնը հայկական դատի հետ առնչութիւն ունեցող ամեն մի հարցի մասին։

Հայ-քրդական համերաշխութեան հարցը, անկասկած, նոր չէ։ Այս հարցը, որ այնքան կենսական նշանակութիւն ունի հայերի համար, զբաղեցրել է մի շարք նշանաւոր դէմքերի՝ Ներսէս Վարժապետեանին, Խրիմեան Հայրիկին, Սըրուանձտեանին, Բաֆֆուն և այլն։ Բացի այդ, հայ յեղափոխական շարժման առաջին օրերից իսկ հայ-քրդական յարաբերութիւնների խնդիրը լուրջ կերպով զբաղեցրել է նաև այդ շարժման ղեկավարներին, այստեղ և այնտեղ, այս կամ այն առիթով եղել են համերաշխութեան, համագործակցութեան փորձեր։ Մանաւանդ այն ժամանակ, երբ քրդերի մէջ նըկատուել են ազատագրական շարժման թոյլ նշաններ, մասնակի ձեռնարկութիւններ, վախլուկ փորձեր։ Այդ փորձերը կապած են Բեդրխան-բէյի և նրա որդու անուան հետ։

Անտարակոյս, միանգամայն հասկանալի են այդ անուանի հայերի մտահոգութիւնը, համերաշխութեան նրանց ձեռնարկները և քարոզները։ Այսպէս թէ այնպէս հայ ժողովրդի ճակատագրիրը սերտ կերպով կապած է քիւրդերի, այդ դեռևս կիսավայրենի, թափառական ժողովրդի հետ։ Ամեն տեղ նրանք ապրում են խառը, կողք-կողքի, և միշտ էլ շըփման, անմիջական յարաբերութեան մէջ են հայերի հետ։

Քր. Միքայէլեանը չը կամենալով ժխտել անցեալից ժառանգած այդ ուղղութիւնը, հայ-քրդական համերաշխութեան ուղին, ինչպէս և ընդգծելով այն փաստը, որ համերաշխութեան փորձերը առհասարակ որոշ հետևանքի չեն հասել,— ուզում է, մի կողմից, հիմնապէս պարզել այն պայմանները, որ կազմում են հայ-քրդական հակառակութիւնների հիմքը և, միւս կողմից, տեսնել թէ կարելի՞ է արդեօք այդ հակառակութիւնների առաջն առնել եւ ի՞նչ միջոցներով։

Ո՞րոնք են քիւրդ-հայկական հակառակութիւնները հիմնաւորող գլխաւոր պայմանները։—Նախ և առաջ քիւրդ ժողովրդի ծայր տգիտութիւնը, անգիտակցական կեանքը։ Այդ լեռնցի ժողովուրդը մինչև XX-րդ դարի սկիզբը հազիւ հասել է «նահապետական ցեղական սկզբունքին»։ Ի՞նչ կարելի է, ուրեմն, այդ ժողովրդից սպասել և պահանջել։ Նա դեռևս չի բարձրացել մինչև զարգացման այն աստիճանը, որ նրա մէջ տեղ գտնեն վերացական բարձր զաղափարներ, ընդ-

հանուր կզբունքներ։ Ոչ միայն այդ։ Քրդերի համար անդամ ազգային գաղափարը մի անըմբռնելի և անմատչելի հասկացողութիւն է։ Հետևապէս, նրանց կապող սկզբունքը ազգային գաղափարը չէ, այլ միմիայն ցեղական սկզբունքը», մի երևոյթ, որ յատուկ է բոլոր այն ժողովուրդներին, որոնք գտնուում են դեռևս նախապատմական շրջանում, զարգացման ամենասկզբնական աստիճանի վրայ։ Ցեղի շահը է նաև ժողովուրդների, ինչպէս և քրդերի, կեանքի ղեկավար սկզբունքը։ «Այն ամենը, ինչ պահպանում է ցեղը, յաճախ նոյնիսկ անհատը—լաւ է, և ինչ կարող է նրանց վնասել՝ վատ։ «Ցեղակից» և «այլացեղ» հոմանիշն են «բարեկամ» և „թշնամի“ խօսքերին։ Հէնց այդ հասկացողութեամբ պէտք է բացատրել քիւրդ ցեղերի մէջ գոյութիւն ունեցող խորն ատելութիւնը, ծայրայեղ թշնամութիւնը։ Հետևապէս, քիւրդերին, որպէս ցեղական սկզբունքով ապրող և մեծ մասամբ թափառական, խաշնարած ժողովրդին, կարելի է դասաւորել միայն մարդկային քաղաքակրթութեան բարբարոսական շրջանում։ Երկու տարբեր քաղաքակրթական կենցաղների այդ դժբաղդ զուգադիպութիւնն է ահա մէկը այն հիմնական պատճառներից, որ պայմանաւորում են քրդական ու հայկական շահերի և տեսակէտների անագին տարբերութիւնը»։

Երկրորդ նշանաւոր պայմանը, որ սրում է քիւրդ-հայկական յարաբերութիւնները, դա այն «տակտիկան է, որին հետևում է տաճիկ կառավարութիւնը հնուց ի վեր»։ Տաճիկ կառավարութեան այդ աւանդական քաղաքականութիւնը կայանում է նրանում, որ ձգտում է հեռու պահել քիւրդերին անկախութեան ձգտումներից, նրանց մշտապէս զբաղեցնում է բոլորովին տարբեր հարցերով, լարում ասորիների, հայերի դէմ և միշտ թշնամական յարաբերութեան մէջ դընում։ Եւ կառավարութիւնը մեծ մասամբ հասնում է իր նպատակին՝ շնորհիւ քիւրդ ժողովրդի տգիտութեան, կողոպուտի և սպանութեան վայրենի բնազդների։ Նա շարունակ եղել է տաճիկ կառավարութեան ձեռքին մի լոկ գործիք, ուրիշ ոչինչ։

Խանգարող պայմանների և պատճառների շարքում

պէտք է ինկատի ունենալ նոյնպէս կրօնի նշանակութիւնը։ Քր. Միքայէլեանը համաձայն չէ այն մարդկանց հետ, որոնք ժխտում են կրօնի դերը հայ-քրդական յարաբերութիւնների մէջ։ Նա միանգամայն իրաւացի է, երբ դիտել է տալիս, թէ մի «կրօն, որի մէջ դարերի ընթացքում ամփոփուել է մահմեդական աշխարհի համարեա բոլոր մտաւոր-բարոյական կեանքը, որը հանդիսացել է որպէս գերագոյն ղեկավար մահմեդական պետութիւնների ամբողջ քաղաքական կազմի մէջ, վերջապէս, մի կրօն, որ «գնաւուր» խօսքով այնքան խստօրէն բաժանում է ամբողջ երկրագնդի այլակրօն տարրերը „մուսուլմաններից“ և „հալալ“ է անում իր հետևողներին այլակրօնների արիւնը և աւար-կողոպուտը, և այդ պատգամներն այնքան համապատասխանում են մանաւանդ քրդերի բոլոր վայրենի բնազդներին—այդպիսի մի կրօն չի կարող չունենալ իր որոշ դերը քիւրդ-հայկական հակառակութիւնների խնդրում»։

Չը նայած այս հիմնական պայմաններին, այս արդեւոտիթ պատճառներին, Քրիստափոր Միքայէլեանը դարձեալ յետ չի կանգնում համերաշխութեան, ընդհանուր գործակցութեան մտադրութիւնից։ Բայց համերաշխութեան գործը ապահոված կը լինի միայն այն ժամանակ, երբ կը վերանան վերոյիշեալ պայմանները։ Բայց ինչպէս, ինչ ճանապարհով և միջոցներով կարելի է հասնել այդ նպատակին։—Պէտք է բարեշրջել քիւրդերի բարբարոս կենցաղը, սիստեմատիքաբար կուել թիւրք կառավարութեան դէմ եւ մերկացնել, պարզել նրա նենդ քաղաքականութիւնը, ցոյց տալ նրա թշնամութիւնը թէ դէպի քրդերը և թէ դէպի մեզ, զէղոքացնել կրօնական ազդեցութիւնները, որ քրդերի մէջ հոմանիշ են նրա ազգայնական հասկացողութիւններին։

Ահա որքան բարդ և դժուարին է այդ հարցը, և պահանջում է երկար ժամանակ, տարիների անդուլ աշխատանք։

Այդ կուլտուրական գործը, որքան մեզ համար կարեւոր և մեծ է, հայ ժողովուրդը, նամանաւանդ հայ յեղափոխական կազմակերպութիւնը չի կարող իր վրայ վերցնել և իր օրեայ գործը դարձնել։ Հետևապէս, ինչպէս ճիշտ նկատում է հայկական դատի առաջնորդը, միակ և այժէական կա-

բնորոշիչ ունեցող հարցը կայանում է նրանում, որ հընար եղածին չափ կարողանանք „մեղմել այդ հիմնական արգելքների վնասաբեր ընաւորութիւնը“։ Միւս կողմից, եթէ հնարաւոր չէ առայժմ—և դա հնարաւոր չէ—ընդհանուր համերաշխութիւն, գոնէ հող պատրաստել մասնակի յարաբերութիւնների և համաձայնութիւնների համար։ Այդպիսի մասնակի, տեղական համաձայնութիւնների համար լաւագոյն և նպաստաւոր հիմք է կազմում յատկապէս ցեղային սկզբունքը։ Քրդերի մէջ, և առհասարակ քաղաքակրթական նոյն աստիճանի վրայ կանգնած ամեն մի ժողովրդի մէջ, ցեղապետը անսահման իրաւունքի տէր է, ցեղի միահեծան առաջնորդը, որին հլու-հպատակ հետևում են ցեղի բոլոր անդամները։ Հետևապէս համոզել մի ցեղապետի, նշանակում համոզել և ուրքի հանել ամբողջ ցեղը։ Եւ այդպիսի յաջող, բայց մասնաւոր և վաղանցուկ, փորձերը եղել են վերջին երկու տասնամեակում։

Բայց այլ տեղ պէտք է որոնել միակ հաստատուն և շիտակ ուղին ու միջոցը։ Մենք պէտք է „մեր սեփական ոյժերը հարուցցնենք եւ կենդանի օրինակներով ապացուցանենք, որ ընդունակ ենք պաշտպանել մեր և շատ անգամ նաև մեր հարևանների շահերը։ Կ'ունենանք այդ ոյժը, կ'ունենանք եւ քիւրդ դաշնակիցներ։ Հակառակ դէպքում հայերը աւելի ձեռնտու պիտի մնան քրդերի համար իբրև հարստահարութիւնների և թալանի աւարկայ, քան իբրև զինակիցներ ընդհանուր թշնամու դէմ“։

Այստեղից միաժանակ պարզ է, թէ որքան Քրիստափոր Միքայէլեանը լաւատեղեակ էր քրդերի վերաբերմամբ և հիմնապէս ճանաչում քիւրդ ժողովրդի հոգեբանութիւնը։ Ինչպէս ամեն տեղ և ամեն մի հարցի վերաբերմամբ, այնպէս էլ այստեղ և այս հարցը վերլուծելիս նա ներկայանում է որպէս իրական մտածող, ի նկատի է ունենում բոլոր իրական յարաբերութիւնները, կեանքի բոլոր բաղկացուցիչ տարրերը, բոլոր գործօնները։

ՀԱՅԿ. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0428972

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԻԱԾՔՆԵՐԸ

1) Ստրպատական, (սակարարի) 1 ր. 50 կ.
2) Պատմափիլիսոփայութիւն . 30 կ.
3) «ՄԻՏՔ» Գիտական-փիլիսոփայական ժողովածու . . . 1 ր. 50 կ.
4) Նիցշէ եւ նրա փիլիսոփայութիւնը 20 կ.
5) Պեսիմիզմի փիլիսոփան (Շոպենհաուեր եւ նրա փիլիսոփայութիւնը) . 50 կ.
6) Միխայլովսկիի որպէս փիլիսոփա-սոցիոլոգ . . . . 60 կ.
7) N. Michailowsky als Philosoph und Soziolog, Berlin. . . . . 1 ր. 50 կ.
8) Յունական փիլիսոփայութիւն 25 կ.
9) Գերմանիերէնից-հայ. բառար. 1 ր.
10) Քր. Միքայէլեան . . . 50 կ.

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Հեղինակի հասցէն՝

Редакція „Аревъ"

Е Франгяну

17496